

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2012թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2013թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2012թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		3
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ		5
1.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ	6
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ		9
2.	2.1. Կրթություն և մշակույթ	9
	2.2. Առողջապահություն	16
	2.3. Սոցիալական պաշտպանություն	19
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ		23
3.	3.1. Գյուղատնտեսություն	23
	3.2. Բնապահպանություն	26
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ		29
4.	4.1. 2012թ ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում նախատեսված շինարարական աշխատանքները	31
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ		32
5.	5.1. Ճանապարհաշինություն	32
	5.2. Զրամատակարարում ու ջրահեռացում	34
	5.3. Գազամատակարարում	36
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ		37
6.	6.1. Տարածքային կառավարում	37
	6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	38
	6.3. Քաղաքացիական հասարակություն	40
7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ		41
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ 2012թ. պետ. բյուջեով (Լոռու մարզ) ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների		52
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Տեղեկանք ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ		55
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Հրատապ ծրագրերով 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և տարվա ընթացքում իրականացված աշխատանքները ըստ ոլորտների:		58

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2012թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ հոկտեմբերի 1-ի արտագնա նիստի թիվ 1130-Ն որոշմամբ:

ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- ❖ Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- ❖ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- ❖ Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- ❖ Քաղաքաշինություն,
- ❖ Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- ❖ Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- ❖ մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,

❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. փետրվարի 22-ի թիվ 23-Ա հրամանով (հավելված 2) հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2012թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄՁԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄՁԾ մոնիտորինգի համակարգը: Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄՁԾ ութ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն», «Արտաքին կապեր և միջազգային կազմակերպություններ») 2012թ. ՏԱՊ-ով նախատեսված և տարվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի (Լոռու մարզ), ծախսատեսակների և կատարողների վերաբերյալ:

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն 2012թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում այլ աղբյուրներով ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Հավելված 3-ում բերված է Հրատապ ծրագրերով 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և տարվա ընթացքում իրականացված աշխատանքները ըստ ոլորտների:

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ըստ Լոռու մարզի 2010-2013թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. կարիքների գնահատման՝ անհրաժեշտ գումարը եղել է **32,439.46 մլն** դրամ, սակայն, ինչպես երևում է ստորև բերված ճշտված աղյուսակից, 2012թ. փաստացի պլանավորվել է կատարել **52,000.77 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **16,458.00 մլն** դրամ պետ բյուջեից, որից **1,293.0** մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով: 2012թ. իրականացվել է **53,078.34** մլն դրամի աշխատանքներ, որից 13,603.61 մլն-ը պետ. բյուջեից, այդ թվում **2,955.61** մլն դրամի աշխատանքներ հրատապ ծրագրերով:

Աղյուսակ 1.

ՀՀ Լոռու մարզի 2012 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2012թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում			մլն դրամ Իրականացված է 2012թ., այդ թվում		
		Ընդամենը	2012թ. Պետական բյուջեից		Ընդամենը	2012թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ	
			Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրերով		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրերով
1.	Արդյունաբերություն և մասնավոր հատված	26,284.20	0.00	0.00	35,001.49	0.00	0.00
2.	Սոցիալական ոլորտներ	5,705.80	824.00	359.00	2,289.25	1,492.73	1,038.89
2.1.	Կրթություն	316.93	238.00	59.00	698.55	576.16	244.16
2.2.	Մշակույթ և սպորտ	367.80	338.00	295.00	1,366.42	788.41	707.26
2.3.	Առողջապահություն	4,901.40	248.00	5.00	112.08	107.97	80.97
2.4.	Սոցիալական ապահովություն	119.67	0.00	0.00	112.20	20.19	6.50
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	540.46	113.00	83.00	853.72	153.00	123.00
3.1.	Գյուղատնտեսություն	371.32	30.00	0.00	728.21	60.00	30.00
3.2.	Բնապահպանություն	169.14	83.00	83.00	125.51	93.00	93.00
4.	Քաղաքաշինություն	8,011.48	7,896.00	256.00	10,400.28	8,313.56	673.56
4.1.	Բնակարանաշինություն	7,661.27	7,640.00	0.00	8,257.99	8,913.56	0.00
4.2.	Բնակարանային տնտես. և բարեկարգում	350.21	256.00	256.00	2,142.29	673.56	673.56
5.	Ենթակառուցվածքներ	11,458.83	7,625.00	595.00	4,533.60	2,400.76	1,120.16
5.1.	Ճանապարհաշինություն	7,720.64	7,436.00	406.00	2,399.18	2,139.84	868.24
5.2.	Զրամատակարարում	3,629.71	153.50	153.50	1,993.44	161.22	161.22
5.3.	Գազամատակարարում	108.48	35.50	35.50	140.98	99.70	90.70
	Ընդամենը	52,000.77	16,458.00	1,293.00	53,078.34	12,360.05	2,955.61

ՀՀ Լոռու մարզի 2012 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

մլն դրամ

Հ/Հ	2012 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների	2012թ. ՏԱՊ-ով պլանի ֆինանսավորումը	Իրականացված է 2012թ. ընթացքում
	Ընդամենը մարզում՝	52,000.77	53,078.34
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ, այդ թվում	16,458.00	12,360.05
I	❖ ՀՀ մշակույթի նախարարություն	43.00	81.15
	❖ ՀՀ քաղաքաշինության նախարարություն	179.00	320.00
	❖ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի մասով	7,640.00	7,640.00
	❖ ՀՀ առողջապահության նախարարություն	86.00	0.00
	❖ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	7,030.00	216.60
	❖ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	30.00	30.00
	❖ ՀՄՆՀ	157.00	250.00
	❖ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ, (Հրատապ ծրագիր)	1,293.00	1,323.60
	II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	747.85
III	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՈՆՈՐ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8,510.72	2,656.85
	❖ Գերմանական KFW բանկ	3,167.50	1,102.90
	❖ Համաշխարհային Բանկ	4,650.00	300.00
	❖ «Ասիական բանկ» վարկային ծրագիր	250.00	657.70
	❖ ԱՄՆ ՄԶԳ	277.20	277.20
	❖ ՈՀՎՀԾ	46.35	43.85
❖ Այլ միջազգ. կազմակերպություններ	119.67	275.20	
IV	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	26,284.20	37,276.54

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2012 թ. ՄԶԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, որ շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների

մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2012թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝

- ✓ Տեղեկատվական և գործարար ուղեցույցների տրամադրում - 21 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ ԱՎԾ-ի կողմից մշակված «Հարկային հաշվետվական ձևերում հարկ վճարողի տնտեսական -գործունեության տեսակների նշման» ուղեցույցի վերաբերյալ տեղեկացում, իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած վերջին փոփոխությունների և խորհրդատվության տրամադրում - 209 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Գործարարների հետ խմբային հանդիպումներ - 39 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Ուսուցողական աջակցության ծրագիր - 236 ՓՄՁ սուբյեկտ և անհատ
- ✓ «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխություն - 12 կին գործարարներից 2 –ին մրցանակի տրամադրում
- ✓ Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց ծրագրի շրջանակում համագործակցության հայտի ընդունում - 22 ՓՄՁ
- ✓ Սկսնակ գործարարների աջակցության ծրագիր - 19 ՓՄՁ սուբյեկտ և անհատ
- ✓ Ապրանքների և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդման աջակցության ծրագիր - 6 ՓՄՁ սուբյեկտ (5 գովազդային վահանակի և 1 կայքի պատրաստման հայտ)
- ✓ Տրամադրված վարկային երաշխավորություններ - 8 գործող ՓՄՁ սուբյեկտի, - 4 սկսնակ գործարարների
- ✓ www.arketplace.smednc.am կայքում տվյալների տեղադրում - 335 ՓՄՁ, 40 ապրանքատեսակ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2010-2013թթ. Լոռու մարզի ՄԶԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա, իսկ 2009 թվականին՝ ՄԶԾ-ի կազմման ժամանակ համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէր գոնե մոտավոր կանխատեսել ճյուղի զարգացման հիմնական ուղղությունները, ներդրումների չափերը:

Չնայած դրան, 2012 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրատեսական է համարվել պլանավորվել **26,284.20** մլն դրամի ներդրումներ: Մասնավորապես՝

- ❖ Հանքարդյունաբերություն 26,064.2 մլն դրամ
(«Ախթալայի ԼՀԿ», «Թեղուտ» և «Սագամար» ՓԲԸ-ներ)

Մարզի արդյունաբերության և մասնավոր հատվածում ներդրումների գերակշիռ մասը հանքարդյունաբերության ճյուղում է:

2012 թվականին, ըստ մարզի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից ստացված տեղեկատվության, մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից նախատեսված **26,284.20** մլն դրամի դիմաց իրականացվել է ընդամենը **35,001.49** մլն դրամի ներդրումներ, մասնավորապես.

- «Վալլեքս» ընկերությունների խումբ («Թեղուտ», «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ներ՝ 33,500.00 մլն դրամ
- «Սագամար» ՓԲԸ՝ 892.00 մլն դրամ
- «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ՝ 232.00 մլն դրամ
- «Վանաձոր-Քիմպրոմ» ՓԲԸ՝ 375.00 մլն դրամ

Բացի այդ, «World Vision» կազմակերպության կողմից Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում զբոսաշրջային ենթակառույցների զարգացմանն աջակցման նպատակով ներ է դրվել շուրջ 2,24 մլն դրամ:

Ըստ Վանաձորում գործող բանկերի մասնաճյուղերից ստացված տեղեկատվության, 2012 թվականին մարզի փոքր և միջին արտադրությունների կողմից նոր արտադրամասերի բացման, արտադրական սարքավորումների վերազինման, նաև շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակով ներգրավվել է 1,165.5 մլն դրամի վարկային միջոցներ:

Հաշվետու տարում ներդրումների գերակշիռ մասն ուղղվել է նոր ժամանակակից սարքավորումների ձեռքբերման, արտադրական շենք-շինությունների կապիտալ վերանորոգման, նաև բնապահպանական խնդիրների լուծման վրա: Արդյունքում մարզում բացվել է մոտ 400 նոր աշխատատեղ (հիմնականում «Սագամար», «Թեղուտ» և «Վանաձոր-Խիմպրոմ» ՓԲԸ-ների կողմից):

Ներդրումներն պլանավորվում են իրականացնել մարզի արդյունաբերության այն ճյուղերում, որոնց արտադրանքի գերակշիռ մասն իրացվում է արտերկրում: Միջազգային շուկայում բարենպաստ զարգացումների դեպքում ընթացիկ տարում հնարավոր է նաև ներդրումների ծավալի զգալի աճ արդյունաբերության այլ ճյուղերում՝ մասնավորապես էներգետիկայում, մեքենաշինության ու սարքաշինության մեջ: Արդյունքում շուրջ 25%-ով կաճի արտահանման ծավալները, կբացվեն ավելի քան 400 նոր աշխատատեղ:

Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող կարևոր գործոններից է Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ընդունված մարզի գերակա ոլորտների զարգացման հայեցակարգային դրույթների հետևողական իրականացումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Մասնավորապես, 2010թ. մշակվել է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1222-Ն որոշմամբ հայտարարված «Հյուսիսային դարպաս» զբոսաշրջության կենտրոնի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սանահինի, Հաղպատի վանական համալիրները, մարզի տարածքում գտնվող Լոռի բերդը, Հնեվանքի, Ախթալայի, Քոբայրի, Բարձրաքաջի, Դսեղի, Քառասնից մանկան, Արդվիի Սուրբ Հովհաննես վանական համալիրները, Օձունի, Բզավորի եկեղեցիները, Դսեղի Ծովեր Լիճը, ինչպես նաև Սանահինի, Հաղպատի, Օձունի, Դսեղի գյուղական ու Ախթալայի ու Թումանյանի քաղաքային համայնքները) զարգացման ծրագիրը՝ համապատասխան հայեցակարգային նպատակներին ու գերակա խնդիրներին:

2012թ. շարունակվել են աշխատանքները Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի ռեգիոնի և ՀՀ Լոռու մարզի միջև կնքված շրջանակային պայմանագրի շրջանակներում՝

1. մարտի 20-21-ը երկօրյա այցով Վանաձորում էին ՊԱԿԱ-ի ռեգիոնալ խորհրդի

պատվիրակությունը, նախագահի խորհրդական Ժերար Բոդինյեի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում երկու մարզերի հետագա համագործակցության վերաբերյալ քննարկվել են հետևյալ հարցերը.

- ✓ Ֆրանկոֆոնիայի զարգացման ուղիներ
- ✓ Տուրիզմի զարգացում, այդ թվում՝ գյուղական տուրիզմ
- ✓ Ռիսկերի կանխատեսում եւ կառավարում
- ✓ 2012 թ. ծրագրերի ամրապնդում (գյուղատնտեսության, առողջապահության, կրթության և արտակարգ իրավիճակների բնագավառներ):

2. Հունիսի 3-7-ը կրկին մարզ էր այցելել ՊԱԿԱ-ի պատվիրակությունը միջազգային կապերի և համագործակցության պատասխանատու Գիյոմ Լալանժի գլխավորությամբ: Այցելության նպատակը՝ Լոռու մարզում անասնաբուծության, տուրիզմի և ագրոտուրիզմի բնագավառներում ուսումնասիրությունների իրականացում, ինչպես նաև 2012-2014թթ մարզում իրականացվելիք ծրագրերի գործողությունների պլանի քննարկում:

3. Դեկտեմբերի 9-ից 13-ը Լոռու մարզում Ա.Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնել էր Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոն: Այցի ընթացքում երկու մարզերի ղեկավարները ստորագրեցին «2012-2014թթ համագործակցության համաձայնագիր», որը նախատեսում է 175.0 հազ եվրո արժողությամբ ներդրում Լոռու մարզում տուրիզմի եւ անասնապահության ծրագրերի իրականացում Ֆրանկոֆոնիայի զարգացմամբ:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն և մշակույթ

Ելնելով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթներից և հիմք ընդունելով Լոռվա մարզում կրթության ոլորտի առկա իրավիճակը, կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվել է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, 12-ամյա կրթության ուսումնական ծրագրերի, գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական և միասնական քննական համակարգի կատարելագործմանը, ավագ դպրոցների ինստիտուտի կայացմանը: Շարունակվել է հատուկ կրթական ու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը:

2012թ. ՏԱՊ-ի համաձայն շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, ավագ դպրոցների կայացման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագրերը: Ընթացիկ տարում հիմնանորոգումն աշխատանքները շարունակվել են Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոցում: Ամրացվել է Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի շենքը: Հիմնանորոգվել են Ախթալայի թիվ 2 և Սարատովկայի դպրոցների տանիքները, Կաթնաղբյուրի և Օձունի թիվ 1 դպրոցների մարզադահլիճները, Թեղուտի դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը: Վերազինվել և նորոգվել են Վանաձորի թիվ 12, Սարչապետի և Ֆիլիտովոյի դպրոցների ջեռուցման համակարգերը: Մասնակի նորոգումներ են կատարվել Լեռնապատի, Դեբեդի և Ձորամուտի դպրոցներում: Կառուցվել է Գարգառ համայնքի մանկապարտեզի շենքը: Ընդհանուր

առմամբ վերանորոգման աշխատանքներ (շենքերի, տանիքների, ջրամատակարարման ու ջեռուցման համակարգերի և այլն) են տարվել մարզի ավելի քան 16 համայնքների կրթական օբյեկտներում:

Լոռու մարզի հանրակրթության ոլորտում 2012թ. ՏԱՊ նախատեսված աշխատանքներից առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում հասցվել է 99,98%-ի (2011թ.99,93% դիմաց):
- Ուսումնասիրվել է հանրակրթական ոլորտի պարտադիր ուսուցումից տարբեր պատճառներով դուրս են մնացել 8 երեխա, որը կազմել է երեխաների քանակի 0.02%:
- Շարունակվել է իրականացվել ներառական կրթություն Վանաձորի թիվ 18, Ստեփանավանի թիվ 1, Ալավերդու թիվ 5, թիվ 8 և Կուրթանի դպրոցներում 107 երեխաների համար:
- Կարևորելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների անընդհատ կատարելագործման գործընթացը, իրականացվել է մարզի 1292 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորումը: Տարբեր պատճառներով 49 վերապատրաստում անցած ուսուցիչներ չեն ատեստավորվել:
- Դպրոցների տնօրենների ընտրության կարգի պահանջների համաձայն իրականացվել է մարզի 43 դպրոցների տնօրենների ընտրություններ:
- Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 158 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների կարգի և այլ հարցերով: Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը կատարվել են փոփոխություններ թվով 31 հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների կազմերում:
- Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի N1262-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգի կրթության բաժնի աշխատակիցները, որպես մրցույթային հանձնաժողովի անդամներ, մասնակցել և խորհրդատվական ծառայություն են իրականացրել շուրջ 352 մրցույթներում:
- Կրթադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը բարելավելու նպատակով ուսումնասիրություններ են կատարվել Դեբեդի, Ագարակի, Կուրթանի, Հարթագյուղի, Լեռնավանի, Լեռնապատի միջնակարգ դպրոցներում, ներկայացվել առաջարկություններ:
- Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ են տարվել միասնական քննություններին մասնակցող 880 շրջանավարտների համար, իրականացվել է մարզի դպրոցների ավարտական քննությունները և գիտելիքների ստուգումը պատշաճ մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից:
- Պատշաճ մակարդակով կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը՝ 71 աշակերտ դարձել է հանրապետական փուլի տարբեր կարգի մրցանակակիրներ:
- Ամփոփվել են «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների արդյունքները: Հաղթողները, ինչպես նաև օլիմպիադաներում հաջողության հասած աշակերտները արժանացել են խրախուսանքի և հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են («Լոռու դպրոց» հիմնադրամի միջոցներով՝ 1.018 մլն դրամ) մարզպետի և համայնքների ղեկավարների կողմից:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. կրթության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **1,270.0 մլն** դրամ, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **316.93 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **238.0 մլն** դրամը պետ. բյուջեով, որից 59.0 մլն-ը՝ հրատապ աշխատանքների կատարման պլանով:

Մարզի կրթության ոլորտում 2012թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **452.93** մլն դրամի դիմաց իրականացվել է **698.55** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **238.00** մլն դրամի դիմաց՝ **576.16** մլն դրամի աշխատանքներ, որից **244.16** մլն դրամի՝ հրատապ ծրագրերով: Համայնքային բյուջեով կատարվել է **57.12** մլն դրամի աշխատանքներ, իսկ ֆինանսավորման այլ աղբյուրներով՝ **65.27** մլն դրամի:

Կրթության ոլորտում 2012թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.1.1.

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.12թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	316.93	698.55	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	238.00	576.16	
	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն		332.00	
1.	Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	153.0	153.0	ՀՀ Քաղաքաշինության նախարարություն
2.	Ալավերդու արհեստագործ. ուսումնարանի հիմնանորոգում	20.0	20.0	
3.	Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում	6.0	6.0	
4.	Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջի հիմնանորոգում		136.0	
5.	Ստեփանավանի թիվ 5 դպրոցի տանիքի հիմնանորոգում		17.0	
	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրերով)	59.00	244.16	
1.	Գարգառի մանկապարտեզի կառուցում	18,0	18,7	ՀԾ 2-րդ դ, ՀԾ 3-րդ դ
2.	Ձորագյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում	2.0	2.0	ՀԾ 2-րդ դ
3.	Օձունի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգում	15.0	15.0	ՀԾ 2-րդ դ
4.	Դեբետի դպրոցի շենքի վերանորոգում	10.0	10.0	ՀԾ 2-րդ դ
5.	Վանաձորի թիվ 12 դպրոցի տանիքի վերանորոգում	11.0	11.0	ՀԾ 2-րդ դ
6.	Ֆիոլետովոյի դպրոցի ջրամատակարարման համակարգի նորոգում	3.0	3.0	ՀԾ 2-րդ դ
7.	Սարչապետ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում		14.16	ՀԾ 3-րդ դ
8.	Վանաձոր համայնքի թիվ 12 դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում		11.33	ՀԾ 3-րդ
9.	Ախթալա համայնքի թիվ 2 դպրոցի տանիքի վերանորոգում		5.52	ՀԾ 3-րդ
10.	Կաթնաղբյուր համայնքի դպրոցի մարզադահլիճի վերանորոգում		4.81	ՀԾ 3-րդ
11.	Օձուն համայնքի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի վերանորոգում		18.88	ՀԾ 3-րդ
12.	Վանաձոր համայնքի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դպրոցի վերանորոգում		18.88	ՀԾ 3-րդ
13.	Թեղուտ համայնքի դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի վերանորոգում		23.60	ՀԾ 3-րդ
14.	Սարատովկա համայնքի դպրոցի վերանորոգում		14.25	ՀԾ 3-րդ
15.	Շնողի համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում		4.72	ՀԾ 3-րդ

16.	Ագարակ համայնքի մանկապարտեզի կառուցում		23.61	ՀԾ 3-րդ
17.	Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզի տանիքի վերանորոգում/Լրաց/		5.30	ՀԾ 3-րդ
18.	Վանաձոր համայնքի թիվ 31 մանկապարտեզի վերանորոգում /Լրաց/		7.00	ՀԾ 3-րդ
19.	Լեռնավան համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում		10.00	ՀԾ 4-րդ
20.	Ալավերդի համայնքի թիվ 8 դպրոցի մարզադահլիճի նորոգում		25.00	ՀԾ 4-րդ
21.	Արջուտ համայնքի դպրոցի պատուհանների փոխում		8.00	ՀԾ 4-րդ
22.	Սարչապետ համայնքի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում		11.00	ՀԾ 4-րդ
23.	Կաթնաջուր համայնքի մանկապարտեզի կառուցում		38.00	ՀԾ 4-րդ
24.	Սարչապետ համայնքի մանկապարտեզի գույքի ձեռքբերում (տուրվենցիա)		5.00	ՀԾ 4-րդ
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	78.93	57.12	
1.	Գարգառի մանկապարտեզի կառուցում	10.00	10.00	
2.	Վանաձորի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգում	10.00	2.82	
3.	Ախթալայի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում	20.00	20.00	
4.	Շահումյանի մանկապարտեզի մասնաշենքի ձեռքբերում	0.90	0.90	
5.	Ագարակի մանկապարտեզի կառուցում	13.08	0.70	
6.	Թեղուտի մանկապարտեզի մասնաշենքի կառուցում	2.00	2.00	
7.	Կաթնառատի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	1.25		
8.	Մեծավանի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	9.70	9.70	
9.	Մեծավանի արտադպրոցական ՀՈԱԿ-ի շենքի կառուցում	11.00	11.00	
10.	Ծաղկաբերի մանկապարտեզի մ/շենքի ցանկապատում	1.00	10.00	
III	ԱՅԼ		65.28	
1.	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր		11.60	
1.1	Ախթալայի թիվ 2 դպրոցի վերանորոգում		3.80	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիր
1.2	Ձորամուտի դպրոցի վերանորոգում		4.00	
1.3	Սարատովկայի դպրոցի վերանորոգում		3.80	
2.	World Vision		25.68	
2.1	24 համայնքների դպրոցների և մանկապարտեզների ջեռուցման համակարգերի կառուցում, մասնակի նորոգում և կահավորում, գործիքների ու պարագաների տրամադրում		25.676	World Vision
3.	«Շեն» ԲՀԿ և Orange		28.00	
3.1	Շահումյանի Համակարգչային կենտրոնի հիմնանորոգում և գործարկում		8.00	«Շեն» ԲՀԿ և Orange
3.2	Թեղուտ համայնքի մանկապարտեզի կահավորում		10.00	
3.3	Արևաշող համայնքի մանկապարտեզի կահավորում		10.00	

Մշակույթ

2012թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Մարզի մշակույթի ոլորտում 2012թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **367.80** մլն դրամի դիմաց իրականացվել է **1,366.42** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեով նախատեսված **338.00** (295.0 հրատապ ծրագրով) մլն դրամի դիմաց իրականացվել է **788.41** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում հրատապ ծրագրով նախատեսված **295.0** մլն դրամի դիմաց՝

707.26 մլն դրամի աշխատանքները: Համայնքային բյուջեներով կատարվել է **283.49** մլն դրամի աշխատանքներ, իսկ ֆինանսավորման այլ աղբյուրներով՝ **294.52** մլն դրամի: Աղյուսակ 2.1.2 –ում բերված են մշակույթի և սպորտի ոլորտներում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների: Լոռու մարզի մշակույթի ոլորտում 2012թ. իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները.

- Հիմնանորոգման աշխատանքներ են տարվել Քոբայրավանքում, Սանահինի վանքում և «Լոռի Բերդ» ամրոցում:
- Համայնքային կենտրոնի շենքեր են կառուցվել Հարթագյուղ, Արևաշող և Գեղասար համայնքներում:
- Մշակույթի տների, երաժշտական դպրոցների, ակումբների և վերանորոգման կամ կառուցապատման աշխատանքներ են տարվել մարզի ավելի քան 20 համայնքներում:
- Արևաշող համայնքում կառուցվել է սպորտ հրապարակ և ֆուտբոլի դաշտ:
- Մշակույթի ոլորտում 2012թ. իրականացվել են նաև հետևյալ միջոցառումները.
- Հայոց բանակի կազմավորման 20-րդ տարելիցին նվիրված մի շարք միջոցառումներ: Այդ թվում՝
 - ✓ Ստեփան Զորյանի տուն-թանգարանում գրական – երաժշտական ցերեկույթ:
 - ✓ Հ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում Սամվել Խալաթյանի «Հրադադար» ներկայացումը:
 - ✓ Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում՝ կազմակերպվել է հանդիսավոր նիստ: Լոռու մարզպետի շնորհավորագրերով պարգևատրվել են 25 ռազմական գործիչներ, մարզի 30 երկրապահ կամավորական միության անդամների ընտանիքներին՝ դրամական պարգևներ: Մի շարք սպաներ և զինվորականներ պարգևատրվել են Վանաձորի քաղաքապետի կողմից: Պաշտոնական արարողակարգից հետո հանդիսության մասնակիցների համար տեղի է ունեցել տոնական համերգ:
- Կազմակերպվել է կանանց միջազգային օրվա, մայրության և գեղեցկության տոնին տոնին նվիրված մի շարք միջոցառումներ՝
 - ✓ Վանաձորի քաղաքապետարանի նիստերի դահլիճում համերգ-հանդիսություն: Շուրջ 69 կանայք ստացան մարզպետի կողմից շնորհավորական բացիկներ և դրամական պարգևներ:
 - ✓ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում կազմակերպվել է տոնական համերգ: Մարզի թվով վեց համայնքների կին ղեկավարներին Լոռու մարզպետի անունից տրվել են հուշանվերներ:
- Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում Վանաձորի Ստ. Զորյանի տուն թանգարանում կազմակերպվել է հանդիպում-հանդիսություն, որտեղ ներկա են գտնվել նաև Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր ռեգիոնի պատվիրակության անդամները: Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղի ուսանողները թատերականացված հատվածներ ներկայացրեցին Վ. Հյուգոյի կյանքի և գործունեության մասին ու «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպից:
- Վանաձորի կերպարվեստի թանգարանում կազմակերպվել է «Նորածնության ճանապարհ՝ երկխոսություն սահմանների խաչմերուկում» ծրագրի ինքնատիպ ցուցահանդես:
- Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կազմակերպվել է Միջազգային Երիտասարդական Սիմֆոնիկ Նվագախմբի «Խաղաղության մեղեդիներ» խորագիրը կրող համերգը:
- Կազմակերպվել է ՀՀ Անկախության 21-ամյա հոբելյանին նվիրված հանդիսություն և տոնական համերգ Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում:

- Վանաձորում անցկացվել է «ՀՀ Լոռու մարզպետի գավաթ» մրցաշարը՝ ֆուտզալ, սեղանի թենիս, վոլեյբոլ մարզաձևերից, որին մասնակցեցին տարածաշրջաններում վերոնշյալ մարզաձևերից հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 2-ական թիմ ամեն մարզաձևից: Բոլոր մարզաձևերում հաղթողներն ու մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվեցին մարզպետի պատվոգրով, մարզպետի գավաթով, մեդալներով, դրամական պարգևներով:

**Մշակույթի և սպորտի ոլորտներում 2012 թ. Լոռու մարզում իրականացված աշխատանքները
ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Աղյուսակ 2.1.2

		2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.12թ.	Ծանոթութ-յուն
	Ընդամենը մարզում՝	367.80	1,366.42	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	338.00	788.41	
	ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	43.00	81.15	
1	«Լոռու մարզային գրադարան» ՊՈԱԿ-ի տեխնիկական վերազինում և արդիականացում		38.15	
2	Քոբայրավանքի հիմնանորոգում	15.00	15.00	
3	Սանահինի վանքի հիմնանորոգում	18.00	18.00	
4	«Լոռի Բերդ» ամրոցի հիմնանորոգում	10.00	10.00	
	ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրերով)	295.00	707.26	
1	Հարթագյուղի համայնքային կենտրոնի շենքի կառուցում	25.00	25.00	ՀԾ
2	Արևաշողի համայնքային կենտրոնի կառուցում	35.00	35.00	ՀԾ
3	Գեղասարի համայնքային կենտրոնի կառուցում	30.00	30.00	ՀԾ
4	Վանաձորի է.Կզարթյանի անվ. Երաժշտական դպրոցի վերանորոգում	205.00	205.00	
5	Կաճաճկուտ համայնքի ակումբի վերանորոգում		9.44	
6	Նորաշեն համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում		5.78	
7	Ճոճկան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում		14.16	
8	Մարգահովիտ համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում		14.16	
9	Կաթնառատ համայնքի մշակույթի տան վերանորոգում		11.33	
10	Արդվու համայնքի մշակույթի տան վերանորոգում		4.72	
11	Լերմոնտովո համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում		3.78	
12	Բազում համայնքում համայնքային կենտրոնի կառուցում		36.09	
13	Սարամեջ համայնքում համայնքային կենտրոնի կառուցում		33.22	
14	Ղուրսայի համայնքի համայնքային կենտրոնի կառուցում		35.00	
15	Մեծ Պարնի համայնքում համայնքային կենտրոնի կառուցում		40.06	
16	Սարահարթ համայնքում համայնքային կենտրոնի կառուցում		35.51	
17	Լեռնահովիտ համայնքում համայնքային կենտրոնի կառուցում		40.06	
18	Արեւաշող համայնքի սպորտ հրապարակի և ֆուտբոլի դաշտի կառուցում		23.45	

19	Վանաձոր համայնքի «Գագիկ Ղազարյան» անվան մարզադպրոցի տանիքի վերանորոգում		12.27	
20	Գեղասար համայնքում համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգի կառուցում/Լրաց/		2.30	
21	Արևածագ համայնքի մշակույթի տան վերանորոգում/Լրաց/		6.00	
22	Շահումյան համայնքում մշակույթի տան շենքի ձեռք բերման նպատակով համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		40.00	
23	Ախթալայի համայնքային կենտրոնի շենքի կառուցում նպատակով համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		15.00	
24	Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համար գույքի ձեռքբերում (սուբվենցիա)		27.00	
25	Կարմիր Աղեգ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում		2.93	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	29.80	283.49	
1	Ալավերդում թանգարանի շենքի մասնակի նորոգում	0.22	0.22	
2	Բազումի մշակույթի կենտրոնի կառուցում	10.00	8.56	
3	Գուգարք գյուղում մշակույթի տան և հանգստի, ժամանցի կենտրոնի նորոգում	0.81		
4	Լոռի Բերդ գյուղի մշակույթի տան հիմնանորոգում	2.53		
5	Կուրթան գյուղի հուշարձանների վերանորոգում	0.54		
6	Արևածագի մշակույթի տան հիմնանորոգում	0.95	0.95	
7	Մարց գյուղի հուշարձանների և մշակութային կոթողների վերանորոգում	0.80		
8	Լեռնահովիտի մշակույթի տան հիմնանորոգում	0.50		
9	Ձորամուտ գյուղի մշակույթի տան վերանորոգում	0.15		
10	Միխայլովկա գյուղի մշակութային օբյեկտների վերանորոգում	0.30		
11	Նորաշեն գյուղի մշակութային օբյեկտների վերանորոգում և կառուցում	2.00	0.50	
12	Պետրովկա գյուղի մշակույթի տան վերանորոգում և կահավորում	0.35		
13	Ծաղկաբեր գյուղի հուշարձանների և մշակութային կոթողների կառուցում ու հիմնանորոգում	1.50		
14	Գուգարքի մարզադպրոցի շենքի վերանորոգում	1.30	0.29	
15	Արևաշող գյուղում հանգստի և սպորտի օբյեկտի կառուցում	7.85	2.50	
16	Վանաձորի Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզադպրոցի երկրորդ հարկի վերակառուցում		6.00	
17	Վանաձորի Է.Կզարթմյանի անվ. Երաժշտական դպրոցի վերանորոգում		264.47	
III	Այլ միջոցներ		294.52	
	ՀՍՆՀ		250.00	
1	Արևաշողի համայնքային կենտրոնի կառուցում		125.00	
2	Հարթագյուղի համայնքային կենտրոնի կառուցում		125.00	
	Մասնավոր Ներդրումներ		44.52	
1	«ԼՄՍԵ» ՀԻՄՆԱԴՐԱՄ		8.7	
	Աքգային, միջազգային տոների, սպորտային և մշակութային տարաբնույթ միջոցառումների կազմակերպում			
2	ՄԱԿ, World Vision, Counterpart/USAID, Զինիշյան Հիշատակի Հիմնադրամ		35.82	
	Լոռու մարզի 15 համայնքներում մշակութային օջախների նորոգում, գույքով ապահովում, կահավորում, նաև մշակութային միջոցառումների կազմակերպում			

2.2. Առողջապահություն

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. առողջապահության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **298.12 մլն** դրամ, փաստացի պլանավորվել է կատարել **4,901.40 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **248.0** մլն դրամը պետ. բյուջեով, որից **5.0** մլն դրամը՝ հրատապ աշխատանքներով:

Մարզի առողջապահության ոլորտում 2012թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **4,901.40** մլն դրամի դիմաց իրականացվել է **112.08** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **248.0** մլն դրամի դիմաց՝ **107.97** մլն դրամի աշխատանքներ, որից **80.97** մլն դրամի՝ հրատապ ծրագրերով: Համայնքային բյուջեով կատարվել է **3.0** մլն դրամի աշխատանքներ, իսկ ֆինանսավորման այլ աղբյուրներով՝ **1.113** մլն դրամի:

Առողջապահության ոլորտում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.2.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.12թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	4,901.40	112.08	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	248.00	107.97	
1.	Շահումյան ԱԱԿ-ի շենքի հիմնանորոգում	27.00	27.00	
2.	Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգում (III փուլ)	146.00		
3.	«Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում	60.0		
4.	Լոռու մարզային հոգեոչափաբանական դիսպանսերի ցանկապատի կառուցում	10.00		
II	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԿՐԻՍՏԱՆԱԿԱՆ (Հրատապ ծրագրով)		80.97	
1	Վանաձորի դիսպանսերի ցանկապատի կառուցում	5.00	0.00	Հանվել է
2	Վանաձոր համայնքի թիվ 1 ամբուլատորիայի տանիքի վերանորոգում		11.39	Հրատապ ծրագրերով
3	«Մեծավանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տանիքի վերանորոգում		18.88	Հրատապ ծրագրերով
4	Գեղասար համայնքի ամբուլատորիայի վերանորոգում		3.00	Հրատապ ծրագրերով
5	«Հոգեոչափաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի հենապատի վերանորոգում		11.33	Հրատապ ծրագրերով
6	Վանաձոր համայնքի ինֆեկցիոն հիվանդանոցի լոկալ ջեռուցման համակարգի կառուցում		7.00	Հրատապ ծրագրերով
7	Գուգարք համայնքի ամբուլատորիայի կառուցում		5.00	Հրատապ ծրագրերով
8	Վանաձոր համայնքի թիվ 5 համաբուժարանի վերանորոգում		5.87	Հրատապ ծրագրերով
9	Սպիտակ համայնքի «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վերանորոգում		18.50	Հրատապ ծրագրերով
III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	3.40	3.00	
1.	Շահումյան ԱԱԿ-ի շենքի հիմնանորոգում	3.00	3.00	
	Ծաղկաբեր գյուղի ԲՄԿ-ի շենքի հիմնանորոգում	0.40		
IV	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ	4,650.00		
1.	Վանաձորի բժշկական կենտրոնի մասնաշենքի կառուցում	4,650.00		
V	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1.113	

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են համարվում բուժօժանությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում,
- Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում,
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում,
- Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում,
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:

Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

2012թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերից իրականացված է՝

- ✓ «Շահումյանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի նախկին շենքի հիմնանորոգման աշխատանքների համար ՀՄՆ հիմնադրամի կողմից ներ է դրվել 27.0 մլն դրամ, 3.0 մլն կատարել է համայնքը:
- ✓ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (նախկին Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր») մանկական վերակենդանացման բաժանմունք բացելու համար վերանորոգվել է տարածք: Մանկական վերակենդանացման բաժանմունքի համար «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել են որոշ բժշկական սարքավորումներ: Բժշկական ժամանակակից սարքավորումներ կհատկացվեն նաև ՀՀ առողջապահության նախարարության և «Վիվասել» ընկերության կողմից:
- ✓ Համայնքի 3 մլն դրամի ներդրումով կատարված են «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցման նախապատրաստական աշխատանքները: ՊՓԲԸ-ի շենքի կառուցման համար կատարվել է հողահատկացում:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթանում են սերտ համագործակցային աշխատանքներ՝ «Հիպոկրատ» հունական

հիմնադրամի, «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների (ԱԱՊԲ) ծրագրերի հետ:

Հունական բժշկական «Հիպոկրատ» հիմնադրամի կողմից սպասարկվել են Թումանյանի տարածաշրջանի բազմաթիվ քաղաքացիներ, հիվանդները ստացել են համապատասխան դեղորայք: Հիմնադրամին կից գործում է շարժական բժշկական խումբ, որը սպասարկում է գյուղական համայնքների բնակչությանը: 2012թ. «Հիպոկրատ» հիմնադրամի կողմից խնամքի պարագաներ, դեղորայք և բժշկական պարագաներ են տրամադրվել մի շարք բուժհաստատությունների:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային համաձայնագրով ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին 2012թ. Լոռու մարզից մասնակցել են 5 բժիշկներ:

«Գեդեոն Ռիխտեր», «Աստելլաս» դեղագործական ֆիրմաները, ինչպես նաև այլ ֆիրմաներ ցուցադրության են ներկայացրել իրենց կողմից արտադրվող դեղորայքի տեսականին, մարզում ՀՀ առողջապահության նախարարության առաջատար մասնագետների կողմից կազմակերպվել են շուրջ 10 սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի գրեթե բոլոր մասնագիտությամբ բժիշկներ:

«Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, որը գործում է Սպիտակ քաղաքում, 2012թ. բժշկական պարագաներ է հատկացրել մարզի մի շարք բուժհաստատությունների:

Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղը Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գործում է 1991թ.-ից՝ իրականացնելով հիմնականում ստոմատոլոգիական ծառայություն: 2010թ. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել է Ֆրանսահայ բժիշկների միության Հայաստանյան մասնաճյուղը:

Ավելի քան 10 տարի Ֆրանսահայ բժիշկների միությունը ֆինանսավորում է նաև Սպիտակի մանկական կենտրոնին, միաժամանակ տրամադրելով անհրաժեշտ դեղորայք:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից տրամադրվել է շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կկայանվի մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակմանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Ներկայումս այն գործում է Մարգահովիտ գյուղում:

Մարզում լիարժեք կայացել է և հաջողությամբ շարունակվում է ծննդօգնության հավաստագրերի ներդրման ծրագիրը:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացվել է նաև հատուկ (առանձին) և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2012թ. «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր» առողջարաններ են ուղեգրվել թվով 19 քաղաքացիներ, համապատասխանաբար՝ 7, 7, և 5, «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 5 երեխա:

2012թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բժիշկ» անվանակարգով: Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ, բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:

2.3. Սոցիալական պաշտպանություն

ՄԶԾ-ում որպես ոլորտային նպատակ նախանշվել է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը Լոռու մարզում, որին նպատակաուղղվել են յոթ ծրագրային ուղղություններով առաջարկված թվով 10 ծրագրերը, որոնց իրականացմամբ կբարելավվի հանրային իրազեկման մակարդակը, սոցիալական ծրագրերի իրականացումը և սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամների շրջանում: Համագործակցության արդյունքում ենթադրվում է, որ կբարելավվի սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազան, շարունակաբար կընթանա սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները:

Մարզի սոցիալական ապահովության ոլորտում 2012թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **119.67** մլն դրամ աշխատանքները տարվա ընթացքում չեն իրականացվել համապատասխան ֆինանսավորում չլինելու պատճառով: Իրականացվել է ՏԱՊ-ով չնախատեսված **112.20** մլն դրամի աշխատանքներ (այդ թվում պետական բյուջեից՝ **20.19** մլն դրամի՝ (որից 6.5 մլն դրամը հրատապ ծրագրով) և **86.7** մլն դրամի՝ միջազգային կազմակերպությունների կողմից), որոնք ներկայացված են Աղյուսակ 2.3.1 ում:

Սոցիալական ապահովության ոլորտում 2012թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Աղյուսակ 2.3.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագրի (մլն դրամ)	Կատարվել է 2012թ ընթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	119.67	112.20	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	0.,0	20.19	
1.	Լոռու մարզում հասարակական շենքերի թեքահարթակների կառուցում /Լրաց/		3.5	
2.	Սպիտակ համայնքի սոց.ծառայության շենքի վերանորոգում /Լրաց/		3.00	Հրատապ ծրագրով
3.	Զոհված զինծառայողի 4 ընտանիքներին բնակապահովման փոխհատուցում (ՀՀ ՊՆ-ի ցուցակներով)		13.69	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ		5.31	
	Համայնքների ներդրում սոցիալական ծրագրերում		5.31	
III	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	119.67	86.70	
1	Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում	0.50		
2	Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների Սպիտակի տարածքային կենտրոնի կառուցում	25.00		
3	Ալավերդու տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծում	1.87		
4	Սպիտակի տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոնի կառուցում (գործունեության ծավալում)	17.40		
5	Աջակցություն «Հայկական Կարիտաս» ԲՀ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ	2.40		

	տարեցներին» ծրագրին			
6	Քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում	0.20		
7	Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոնի զարգացում	2.30		
8	Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովում	70.00		
9	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ		86.70	
9.1	Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 քաղաքային եւ գյուղական համայնքներում իրականացվել են 33.06 մլն դրամ (համայնքների ներդրումները՝ 2.474մլն դրամ) ,		53.30	
9.2	Ստեփանավանի գրասենյակի միջոցով՝ Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 4.995 մլն դրամ (2.84 մլն համայնքների ներդրումներ):		33.40	

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2012թ. կատարվել են հետևյալ աշխատանքները.

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում** ծրագրի շրջանակներում մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ ինտեգրված սոցճառայությունների մատուցման փորձնական ծրագրի շրջանակում իրականացվել է 10 դասընթաց մարզի տարածաշրջաններում՝ 30 մասնագետների (Լոռու մարզպետարան, մարզի ՄԾՏՏՄ-ների մասնագետներ, համայնքների ներկայացուցիչներ մասնակցությամբ):
- Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). ՀԿ-ների, հիմնադրամների («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ , «Ունիսոն» ՀԿ, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, «Հայկական միացյալ հիմնադրամ», «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ, «Հայկական Կարիտաս», «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հայ կրթական հիմնարկություն», «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում») և ՏԻՄ-երի համատեղ իրականացվել է սոցիալական մի քանի տասնյակ սոցիալական նշանակության ծրագրեր:
- «Խաչվող ուղիներ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Բարին արա» ծրագիրը խթան հանդիսացավ Վանաձորի կրթական հաստատությունների կողմից ավելի քան 200 միջոցառումներ կազմակերպելու համար:
- Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, Խուլերի կազմակերպություն և այլն): Խոցելի խմբերի վերաբերյալ համայնքներում առկա է տեղեկատվական շտեմարաններ, որոնց հիման վրա համայնքներում ընթանում են օգնության ծրագրերը: Մասնավորապես՝ ՀՀ բուհերում սովորող ռիսկային խմբերի ուսանողներին աջակցություն՝ 1, ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքներին օգնություն՝ 192, Վանաձորի նախկին տնակային ավանների բնակիչներին բնակարանային վարձավճարի տրամադրում՝ 19 ընտանիք, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից տարեցների խնամքի և տաք սննդի տրամադրման աջակցություն՝ 484 և այլն:
- Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում. ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված

կամավորների թիվը՝ 61 («Առավոտ» ՀԿ՝ 25, «Հայկական Կարիտաս»՝ 14 (Վանաձոր՝ 10, Տաշիր՝ 4), «Լիարժեք կյանք»՝ 18), որոնից վերապատրաստվել են 18-ը:

- **«Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների (սոցիալական ծառայություն, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՄՓՀ) կառուցում» ծրագրի** իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ: **Դեռևս հարմար տարածքներ չեն գտնվել Ստեփանավան, Սպիտակ քաղաքներում** (Սպիտակի քաղաքապետարանում, որտեղ տեղակայված են զբաղվածության, ԲԿԱԳ-ի և ռեգիստրի տարածքային մարմինները, առաջիկայում ազատվելու են կադաստրի ծառայության երկու աշխատանքային սենյակները, որոնք Սպիտակ համայնքի ղեկավարը պատրաստակամություն է հայտնել տրամադրելու սոցիալական ծառայություններին):

Ալավերդիում առաջարկվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշմամբ /N 5 հավելված/ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող «Ալավերդու ծննդատուն» ՊՓԲԸ-ի եռահարկ մասնաշենքի տարածքը (2099.4 քառ. մ մակերեսով), որն 2013թ. ընթացքում ամբողջովին կազատվի (ներկայումս «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ընթանում են վերանորոգման և վերապրոֆիլման աշխատանքներ):

Տաշիրի տարածաշրջանային կենտրոնում՝ Տաշիր քաղաքում առաջարկվում է Տաշիր համայնքին պատկանող նախկին շրջխորհրդի գործկոմի շենքը (գտնվում է քաղաքապետարանի հարևանությամբ՝ Լենինի թիվ 96 հասցեում) վերակառուցել որպես համալիր կենտրոն (տարածքը լիովին բավարար է բոլոր ծառայությունների տեղակայման համար), որի առաջին հարկում կտեղակայվի նաև միասնական ընդունարանը: Առաջարկվող տարածքի համար առկա են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ՀՀ 2008թ. պետական բյուջեով ֆինանսական միջոցներ էր հատկացվել շենքը վերակառուցելու համար, սակայն տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չի եղել իրականացնել:

Իսկ Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14 հասցեում 2005թ.-ից գործում է Սոցիալական համալիր կենտրոնը (որպես հանրապետությունում փորձնական առաջին ծրագրի արդյունք):

2012թ. հունիսին դժբախտ պատահարի հետևանքով (էլեկտրական լարերի կարճ միացում) հրդեհվեց Սպիտակի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության շենքը: Չնայած դժվարություններին, ընդամենը երեք շաբաթում վերանորոգվեց շենքը (մարզին տրամադրված հրատապ ծրագրերից հատկացվեց 3.0 մլն դրամ) և բնականոն հունի մեջ փոխադրվեց գործակալության աշխատանքը:

- **Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում.** Մարզպետարանի աշխատակազմի թվով 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին (Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) տրամադրվել են 2-ական նոր համակարգիչներ և նրանք ինչպես մարզպետարանի, այնպես էլ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ աշխատում են կայուն համացանցային կապով:
- **Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում ծրագրի շրջանակներում.** «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ տարեցներին» ծրագրին աջակցությունը ընթացել է ընտանեկան նպաստ համակարգում չընդգրկված հրատապ օգնության տրամադրման (սոցիալական

աջակցության խորհուրդների) միջոցով: Շահառուների ցուցակները յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորի գրասենյակի կողմից:

- ✓ ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը 18, որից՝ «Լիարժեք կյանք» ԲՀԿ՝ 6, «Հայկական Կարիտաս»՝ 12:
- ✓ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 484 («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի միջոցներով՝ Վանաձոր՝ 169, Ալավերդի՝ 126, Սպիտակ՝ 116, Տաշիր՝ 73)
- ✓ Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 160 («Հայկական Կարիտասը» Վանաձորում և Տաշիրում սպասարկում է համապատասխանաբար 100 և 60) տարեցներ:
- **Հաշմանդամություն ունեցող անձանց** (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով՝ Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամություն ունեցողների թիվը՝ 210 (55 սայլակ, 10 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 55 ձեռնափայտ, 13 հենակ, 14 քայլակ, 45 լսողական սարք (որից՝ 35-ը՝ Վանաձորի ՄԾՏԳ), պրոթեզավորում՝ 24 անձ, որից՝ 12 կրծքի):
- **«Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոն»-ի զարգացում.** Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել են 60 երեխաներ, որից՝ 15 հաշմանդամություն ունեցող:
- Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում. Հաշվառված խնամատար ընտանիքների թիվը՝ 5, խնամատար ընտանիքներում տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը՝ 5,
- **Աջակցություն զբաղվածության քաղաքականությանը.** Զբաղվածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:
 - ✓ Վերապատրաստված գործազուրկների թիվը՝ 206 (Վանաձոր՝ 99, Ալավերդի՝ 33, որից 5՝ ՄԱԿ-ի ծրագրով, Սպիտակ՝ 28, Ստեփանավան՝ 29, որից 15՝ ՄԱԿ-ի ծրագրով, Տաշիր՝ 17)
 - ✓ Աշխատանքի տեղավորված վերապատրաստված 243 գործազուրկներից աշխատանքի են տեղավորվել թիվը՝ 74, (Վանաձոր՝ 46, Սպիտակ՝ 5, Ստեփանավան՝ 14, Տաշիր՝ 9) որից՝ 1 հաշմանդամություն ունեցող:

Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.

- **Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր**
Ֆինանսական նպատակային հատկացումներ չեն եղել:
- **Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր** ՀՀ ՊՆ աշխատախումբը կատարել է տնայցեր՝ Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների անօթևան շահառուների ընտանիքներ: Դեռևս ձևակերպումների կարիք կա ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 944-Ն որոշմամբ հաշմանդամ 3 զինծառայողի ընտանիքներ 3 սենյականոց բնակարանների տրամադրման գործընթացը, իսկ ՀՀ պետական բյուջեով զոհված զինծառայողների 4 ընտանիքների տրամադրվել է նպատակային 13.692.000 դրամ բնակապահովման ծրագրի շրջանակներում:
- **ՄԶԾ առաջարկված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների** լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են

կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: Քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 67 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 17 և մշակութային՝ 50) առկա 4 թեքահարթակներին ավելացել է ևս 7 թեքահարթակ, որոնք կառուցվել են հրատապ ծրագրով հատկացված 3,5 մլն դրամ միջոցներով:

- **ՄԶԾ 2012թ. մեկնարկվելիք ծրագրերի կատարման համար** (Սպիտակում տարեցների կենտրոնի հիմնում, Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծում, Վանաձորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման մարզային ծառայության ստեղծում) համայնքները պատրաստակամ են, նպատակային միջոցներ չեն հատկացվել: Իսկ Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծումը քաղաքապետարանը հրատապ անհրաժեշտություն չի համարել:
- Որպես ոլորտային նպատակ ընտրված էր՝ Լոռու մարզում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այս ուղղությամբ նպատակադրված զգալի աշխատանքներ են կատարվել:

Անապահովության գնահատման համակարգում 01.01.2012թ. դրությամբ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է ամսական միջինը 18.211 (նախկինում՝ 16,719):

01.07.2012թ. դրությամբ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 50.707 մարդ (2011թ. նույն ժամանակաշրջանում՝ 51,785, նվազումը՝ 2.08 տոկոս), հաշմանդամ են 16,707-ը, որից՝ առաջին խումբ՝ 946, երկրորդ խումբ՝ 8.684, երրորդ խումբ՝ 6.350, մանկուց հաշմանդամություն ունեն 727 երեխա, ծնողազուրկ են 2,393 երեխա, որից՝ 34 երկկողմանի:

01.10.2012թ. դրությամբ աշխատանք փնտրողներ են 9630 քաղաքացի (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 11520, նվազումը՝ 16.49 տոկոս), չբաղված աշխատանք փնտրողներ են 8719 (նախկինում՝ 10297, նվազումը՝ 15.3 տոկոս), գործազուրկներ են 8551 (նախկինում՝ 10.132, նվազումը՝ 15.6 տոկոս): Մարզում գործազրկության մակարդակը կազմում է 8.1 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազումը կազմում է 1.3 տոկոս (նախկինում՝ 9.4 տոկոս), որը պայմանավորված է չներկայանալու պատճառով հաշվառումից հանելու հանգամանքով: 2012թ. ընթացքում մարզում աշխատանքի են տեղավորվել 654 աշխատանք փնտրողներ, որոնցից 374-ը՝ կին (2011թ. այդ ցուցանիշը՝ 750 էր, որոնցից 460-ը՝ կին):

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Մարզի գյուղատնտեսության ոլորտում 2012թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **671.32** մլն դրամ, որից **30.0** մլն դրամը պետական բյուջեից (6 հատ հակակարկտային կայանքների տեղադրում), **623.55** մլն դրամ՝ միջազգային կազմակերպությունների կողմից (**346,35** մլն դրամ՝ ոռոգման համակարգերի վերականգնման և **277.20** մլն դրամ՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր արոտների կառավարման և անասնապահության զարգացման համար) և **17.77** մլն դրամ համայնքային բյուջեներից:

2012թ. իրականացվել է **728.21** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. Բյուջեով՝ **60.00** մլն դրամի (տեղադրվել է 6 հատ հակակարկտային կայանք), միջազգային կազմակերպությունների կողմից՝ 621.05 մլն դրամի և համայնքային բյուջեից՝ **9.18** մլն դրամի աշխատանքներ:

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ կարտոֆիլի վիրուսազերծ պալարիկների արտադրությունը երկրագործության ինստիտուտի Ստեփանավանի տարածքային կայանի հիման վրա
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

- Շվեդարական «Կազա» հիմնադրամի աջակցությամբ Գոգարան համայնքում գործող «Զարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է տրակտոր իր գյուղատնտեսական գործիքներով և ապրանքային վարկի ձևով սերմացուներ ու պարարտանյութ (շուրջ 3,5 մլն դրամ):
- 2011թ. աշնանացանի համար ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է ՌԴ-ից ներկրված 65,34տ աշնանացան ցորենի էլիտային սերմացու, որը տրամադրվել է 15 ֆերմերային տնտեսությունների, որով կատարվել է 217.8 հա աշնանացան ցորենի ցանք:
- 2012թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից գարնանը մարզին հատկացվել է 2000.0 տ ազոտական պարարտանյութ, որը բաշխվել է մարզի 63 համայնքների և 550 տ (644050 լիտր) դիզելային վառելանյութ, որը բաշխվել է 80 համայնքների: Աշնանը հատկացվել է 134,0 տ ազոտական պարարտանյութ՝ բաշխվել է 15 համայնքների և 500 տ (585500 լիտր) դիզելային վառելանյութ՝ բաշխվել է 55 համայնքների:
- «2010-2014թթ. Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի» շրջանակներում մարզին հատկացվել է 53,4 տոննա աշնանացան ցորենի էլիտային սերմացու, որը բաշխվել է 14 սերմարտադրող ֆերմերների: 294,0 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուն բաշխվել է 48 համայնքների:
- Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է գարնանը 668կգ, իսկ աշնանը՝ 773,4 ցինկի ֆոսֆիդ, որը բաշխվել է մկնանման կրծողներով առավել վարաքված համայնքներին:

- ՀՀ կառավարության կողմից մարզի Գարգառ, Գյուլագարակ, Վարդաբլուր և Կուրթան համայնքներում տեղադրվել է 6 հակակարկտային կայանքներ:
- Հայ-Շվեդարական «Կազա» հիմնադրամի աջակցությամբ Արջուտ համայնքի «Ակունք» ակունք գյուղացիական կոոպերատիվին տրամադրվել է 200 գլուխ մայր ոչխարներ:
- «Ագրոհոլդինգ-Արմենիա» ՍՊԸ-ի կողմից մարզի Կուրթան համայնքին տրամադրվել է 3, իսկ Օծուն համայնքին՝ 2 գլուխ տոհմային ցուլիկներ անասնապահության բնագավառում հոտի բարելավման նպատակով:
- Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի դեսպանատան ֆինանսական աջակցությամբ վերակառուցվել է Արջուտ համայնքի ոռոգման ներքին ցանցից 1.6 կմ երկարությամբ հատված: Շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվել է 6,0 մլն դրամ ներդրում, որից 1,0 մլն դրամը՝ համայնքի կողմից:
- «Վորլդ վիժըն» և «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրերի համագործակցությամբ վերակառուցվել է Այրում համայնքի ոռոգման ներքին ցանցից 2,0 կմ երկարությամբ հատված:
- Գարնարային հնարավոր ջրհեղեղներից, հեղեղումներից և սելավներից գյուղատնտեսական ցանքատարածությունները պաշտպանելու նպատակով մարզի գետերի, հեղեղատարների և սելավատարների առավել վտանգավոր տեղամասերի համար կազմված կանխարգելիչ միջոցառումներից Ձորագյուղի «Ուռուտ» կոչվող տարածքով անցնող Ձորագետ գետի ափերի ամրացման աշխատանքները ընդգրկվել են պետական ծրագրի մեջ:
- Լոռու մարզում 2011-2015թթ. իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի շրջանակներում, 2012թ-ին Լորուտ, Դսեղ, Շամուտ, Ահնիձոր, Քարինջ, Մարց համայնքների արոտներում ավարտվել են անասունների ջրամատակարարման ու ճանապարհների վերանորոգման հետ կապված աշխատանքները: Տեխնիկական միջոցներ են տրամադրվել Մարց համայնքին՝ մամլիչ, Ահնիձորին՝ տրակտոր և մամլիչ, Քարինջին՝ մամլիչ, Դսեղին՝ տրակտոր և մամլիչ: Տեխնիկայի տրամադրման ծրագիրը ընթացքի մեջ է:

Գյուղատնտեսության ոլորտում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Աղյուսակ 3.1.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.2012թ	Ծանոթ.
	Ընդամենը մարզում՝	671.32	728.21	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	60.00	60.00	
1	6 հատ հակակարկտային կայանքների տեղադրում	30.00	30.00	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐԳՈՒՄ (Հրատապ ծրագրով)		30.00	
1	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Լորուտ համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		2.09	
2	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Աթան համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		0.99	
3	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի		6.72	

	իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Դսեղ համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)			
4	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Շամուտ համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		0.99	
5	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Ահնիձոր համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		3.40	
6	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման նպատակով համայնքներին սուբսիդավորում Քարինջ համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		4.46	
7	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման նպատակով համայնքներին սուբսիդավորում Դեբետ համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		2.00	
8	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի իրականացման համայնքի համաֆինանսավորման նպատակով Մարց համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		4.35	
9	Խնկոյանի ոռոգման ջրամբարի վերանորոգում		5.00	
III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	17.77	9.18	
1	Գյուղտեխնիկայի (պահեստամասերի) ձեռքբերում գյուղ Լերմոնտովո	0.10		
2	Գյուղտեխնիկայի ձեռքբերում գյուղ Գարգառ	3.60		
3	Գյուղտեխնիկայի ձեռքբերում գյուղ Քարինջ	1.00	1.00	
4	Գյուղտեխնիկայի ձեռքբերում գյուղ Ղուրսալի	4.89		
5	Ջրաշենի ոռոգման 3-րդ կարգի ջրանցքի վերակառուցում 1600մ երկարությամբ	8.18	8.18	
IV	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	623.55	621.05	
1	Ջրաշենի ոռոգման 3-րդ կարգի ջրանցքի վերակառուցում 1600մ երկարությամբ	46.35	43.85	
2	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր Արտոների կառավարում և անասնապահության զարգացում	277.20	277.20	
3	Համաշխարհային բանկի «Ոռոգման համակարգերի վերականգնում» ծրագիր Նալբանդի ջրանցքի շուրջ 4 կմ երկարությամբ հատվածի վերակառուցում	300.00	0.12	
V	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ		37.98	
1	Գոգարան համայնքում գործող «Ջարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է տրակտոր իր գյուղատնտեսական գործիքներով և ապրանքային վարկի ձևով սերմացուներ ու պարարտանյութ		3.50	
2	Արջուտ համայնքում գործող «Ակունք» կոոպերատիվի կողմից 200 գլուխ մայր ոչխարներ ձեռք բերում		16.00	
3	Լոռու մարզի 20 համայնքներում գյուղատնտեսության զարգացման նպատակով աջակցություն ֆերմերներին		18.48	

3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանության ոլորտում 2012թ. ՏԱՊ-ով բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսվել է **179.65** մլն դրամ, որից **93.00** մլն դրամը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով, **86,65** մլն դրամ՝ համայնքային բյուջեներից: 2012թ. իրականացվել է **125.51** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում **93.00** մլն դրամը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով: Համայնքային բյուջեներից ներ է դրվել **32.51** մլն դրամ:

Բնապահպանության ոլորտում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Աղյուսակ 3.2.1

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.2012թ	Ծանոթ.
	Ընդամենը մարզում՝	179.65	125.51	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	93.00	93.00	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	93.00	93.00	
1	Ալավերդու աղբավայրի կառուցում	65.00	65.00	
2	Վահագնիի հեղեղատարի կառուցում	8.00	8.00	
3	Գյուլագարակի հեղեղատարի կառուցում	10.00	10.00	
4	Դարպաս գյուղի հեղեղատարի վերանորոգում	10.00	10.00	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	86.65	32.51	
1	Ալավերդու աղբավայրի կառուցում	62.97	22.04	
2	Վահագնիի հեղեղատարի կառուցում	3.51		
3	Կեղտաջրերի հեռացում և աղբի վերամշակում Վանաձորում	12.00	4,94	
4	Աղբարկղների տեղադրում և հեղեղատարի կառուցում Գուգարք գյուղում	2.14	1.90	
5	Հեղեղատարի կառուցում Դարպաս գյուղում	1.00		
6	Կեղտաջրերի հեռացման համակարգի կառուցում Աքորի գյուղում	3.51	3.51	
7	Կեղտաջրերի հեռացման համակարգի կառուցում Ծաթեր գյուղում	1.40		
8	Կեղտաջրերի հեռացում Խնկոյան գյուղում	0.12	0.12	

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2012թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- 2012թ. «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.
 - ✓ նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների **լրացում** և **խնամք**
 - Կաթնաջուր համայնքում - 21.4 հա
 - Սպիտակ համայնքում - 11.4 հա
 - Ֆիոլետովո համայնքում - 1.8 հա
 - Արջուտ համայնքում - 23.2 հա

➤ Ծաղկաբեր համայնքում - 172 հա

➤ Ղուսալի համայնքում - 40 հա:

✓ անտառտնկման աշխատանքներ Սարատովկա և Կոնդեու համայնքներում՝ 80 հա:

Ընդհանուր առմամբ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը իր գործունեության ընթացքում Լոռու մարզում արդեն իսկ իրականացրել է շուրջ 550 հա համայնքային տարածքների անտառտնկման, խնամքի, ցանկապատման աշխատանքներ: Հիմնադրված անտառտնկարկների խնամքի և լրացման աշխատանքներն կրում են շարունակական բնույթ:

Հիմնադրամն իրականացնում է նաև բնապահպանական ուսուցողական աշխատանքներ: Մասնավորապես ս. թ. հունիսի 13-ին Մարգահովիտ համայնքում բացվել է հիմնադրամի կողմից կառուցված «Օհանյան» բնապահպանական կրթության կենտրոն, որտեղ կիրականացվեն տարաբնույթ բնապահպանական ուսուցողական դասընթացներ:

- Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրով նախատեսված է մինչև 2020թ. հատել 158.1 հա անտառ, իսկ մնացած 198.9 հա-ը՝ 2020թ. և հետագա տարիներին: Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից 2009-12թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով արդեն իսկ 220 հա համայնքային տարածքների վրա կատարվել են անտառտնկման, ցանկապատման և խնամքի աշխատանքներ: Նույն ծրագրի շրջանակներում «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է 113 հա տարածքի անտառպատում:
- Գործող օրենքի համաձայն Ալավերդու պղնձածուլական գործարանի և Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետական բյուջեից կատարվում են մասնահանումներ՝ բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար: Ստորև բերվում է ՀՀ պետական բյուջեի կողմից 2009-2012թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար տրամադրված գումարների վերաբերյալ տեղեկատվություն.

հազ. դրամ

Համայնքներ	Տարիները				Նախատեսված է վճարման
	2009	2010	2011	2012	2013
Ալավերդի	103 564.2	37 292.2	55 155.9	94 411.5	110,000.0
Հաղպատ	9 197.3	9 197.3	18 600.0	23 602.8	25,000.0
Օձուն	8 992.8	9 006.0	18 600.0	23 602.9	58,664.8
Աբրրի	18 470.5	18 994.2	11 712.0	23 602.8	28,000.0
Հագվի			800.0	8 000.0	50,000.0
Ախթալա		2 540.0	1 000.0	1 500.0	3,500.0
Ընդամենը	140 224.8	77 029.7	113 067.9	174 720.0	275,004.8

- «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացվել է թափոնակուտակումների վերաբերյալ տվյալների հավաքագրում, գույքագրում, քարտեզագրում, որի հիման վրա մշակվել է թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն, որը նախատեսում է ամբողջ մարզի տարածքում ստեղծել 2-3 եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր:

Իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել է մարզի թափոնների կառավարման ռազմավարություն նախագիծ, որը պետք է ներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի նախաձեռնությամբ մշակվել և մարզում գործող ԵՀԳԳ «Թափոնների կառավում» տարածաշրջանային ծրագրի աջակցությամբ իրականացվել են Թումանյանի տարածաշրջանի համար մեծ կարևորություն ունեցող մի շարք բնապահպանական ծրագրեր, մասնավորապես.

➤ 2012թ. նոյեմբերին «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կոնսերվացված «Նազիկ» պոչամբարի 1 հա տարածքում իրականացվել է ռեկուլտիվացիոն և կանաչապատման աշխատանքներ, որի նպատակն է.

- ✓ ծառերի և թփուտների արմատային համակարգերի միջոցով կանխարգելել պոչամբարի հողաձածկ շերտի կայունության ապահովումը (սելավա-սողանքային և քամու էրոզիայի առաջացման կանխումը)
- ✓ Շրջակա միջավայրի վրա պոչամբարի ազդեցության նվազեցումը և տարածքի բարեկարգումը:

Միջոցառման ընթացքում, ընդհանուր առմամբ, տնկվեցին 15 տեսակի 1000 հատ ծառեր և թփեր (թխկի, հացենի, կեչի, բարդի, արոսենի, եղրևանի, ճապկի և այլն):

2012թ. դեկտեմբերի 14-ին Ալավերդի համայնքի ափամերձ տարածքում իրականացվել է տարերայնորեն ձևավորված աղբավայրի ռեկուլտիվացիայի և կանաչապատման աշխատանքներ: Աշխատանքի արդյունում հողաձածկվել է շուրջ 2 հա տարածք, որի վրա ցանվել են անտառային ծառատեսակների սերմեր և տնկվել են 350 թփեր: Ափամերձ տարածքից հավաքվել և Ալավերդու նարակառույց աղբավայր է տեղափոխվել 5 մեքենա կենցաղային թափոններ: Այս բնապահպանական ակցիային իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ-ն (անվճար տրամադրել է մեկ ավտոկոուսն, էկսկուրսոր, մեկ ինքնաթափ) և «ԷՅ-ՍԻ-ՓԻ» ՓԲԸ-ն (անվճար տրամադրել է մեկ բուլդոզեր, մեկ ինքնաթափ): Դիզելային վառելիքի և աշխատուժի ֆինանսավորումն իրականացրել է ԵՀԳԳ «Թափոնների կառավում» տարածաշրջանային ծրագիրը:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, քաղաքաշինության ոլորտում (բնակարանաշինություն և բնակարանային տնտեսություն ու բարեկարգում) 2012թ. մարզում նախատեսված էր իրականացնել **16,412.48** մլն դրամ ծավալով աշխատանքներ, սակայն 2012թ. պլանավորվել է **7,999.95** մլն դրամի, այդ թվում **7,896.0** մլն դրամը՝ պետություն, որից **256.0** մլն դրամը հրատապ աշխատանքների կատարման պլանով:

2012թ. իրականացվել է **10,400.28** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **8,313.56** մլն դրամ (**673.56** մլն դրամը՝ հրատապ ծրագրով): Համայնքային բյուջեներից ներ է դրվել **86.72** մլն դրամ: **2,000.0** դրամ գնահատվել է մարզում քաղաքաշինության ոլորտում մասնավոր ներդրումներ միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների ծավալը:

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից քաղաքաշինության գծով 2012թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.2012թ. (մլն դրամ)	Ծանոթություն
-----	----------------------------	--------------------------	--	--------------

	Ընդամենը մարզում՝ Քաղաքաշինություն	7,999.95	10,400.28	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	7,896.00	8,313.56	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	256.00	673.56	
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	103.95	86.72	
	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	0.00	2,000.00	
	ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	7,661.82	8,257.99	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	7,640.00	7,640.00	
I	«ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼՁ» ՓԲԸ	7,640.00	7,640.00	* տվյալները ենթակա են ճշտման
1.	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակ. շինարարություն	7,640.00	7,640.00	
II	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	0.00	0.00	
III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	21.82	17.99	
1	ք. Վանաձորի Տարոն-2 ՔՇՀ 7 թիվ 36 եւ 37 անավարտ շենքերի շինարարություն	0.55		
2	Վանաձոր քաղաքում բնակարանաշինական աշխատանքներ	8.27	4.99	
3	Տաշիր քաղաքում բնակարանաշինական աշխատանքներ	13.00	13.00	
IV	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ		600.00	
	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	338.13	2,142.29	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	256.00	673.56	
I	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	256.00	673.56	
1	Ալավերդու բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	50.00	109.37	
2	ք. Ախթալայի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	25.00	44.61	
3	ք. Թումանյանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	6.00	9.10	
4	Շահումյանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	12.00	12.00	
5	ք. Ստեփանավանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	11.00	21.00	
6	Գուգարքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	15.00	15.00	
7	Ձորագետավանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	5.00	19.44	
8	ք. Վանաձորի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	13.50	115.27	
9	Լոռու մարզպետարանի շենքի վերանորոգում	65.00	65.00	
10	Գոգարան գյուղի կենտրոնական փողոցի լուսավորության համակարգի կառուցում և փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում	4.00	4.00	
11	Թումանյան քաղաքի փողոցների լուսավորության համակարգի կառուցում	5.00	9.73	
12	Ալավերդու փողոցների լուսավորության	3.50	8.22	

	համակարգի կառուցում			
13	Ստեփանավան քաղաքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	6.00	13.72	
14	Նախագծահետազոտական ծախսեր	35.00	127.65	
15	Քարկոփ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում		7.55	
16	Տաշիր համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում		19.85	
17	Շամլուղ համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում		7.50	
18	Սպիտակ համայնքի ճանապարհների լուսավորության համակարգի կառուցում		18.88	
19	Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում		32.13	
20	Օձուն համայնքի բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգում/Լրաց/		9.54	
21	Ձորամուտ համայնքի կամրջի վերանորոգում/Լրաց/		4.00	
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	82.13	68.73	
1	ք. Վանաձորի բակերի բարեկարգում	1.70	1.70	
2	Վանաձոր քաղաքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	44.31	48.15	
3	Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	2.00	2.00	
4	Ալավերդի քաղաքում բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում վերանորոգման աշխատանքներ	0.39	0.39	
5	Սպիտակ քաղաքում բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում վերանորոգման աշխատանքներ	2.00	0.98	
6	Սպիտակ քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում	6.00	3.85	
7	Գուգարք գյուղի գերեզմանոցի ցանկապատում	4.50		
8	Ֆիոլետովո գյուղի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	1.44	1.44	
9	Գուգարքի թիվ 7,8 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	0.30	0.30	
10	Գյուլագարակի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	1.00	0.50	
11	Լերմոնտովի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգում	0.50	0.50	
12	Նախագծահետազոտական ծախսեր	18.00		
13	Վանաձորի բազմաբնակարան շենքերի աղբամուղների, աղբարկղների ու վերելակների վերանորոգում		8.92	
III	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ		1,400.00	
			1,400.00	

4.1 2012թ. ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում ըստ ոլորտների նախատեսված է հրականացնել հետևյալ շինարարական աշխատանքները՝

• Բնակարանաշինության և բնակարանային տնտեսության ոլորտում

Երկրաշարժից տուժած գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն՝ պետ. Բյուջեից 7,640.00 մլն դրամ, համայնքային բյուջեները ք. Վանաձորի Տարոն-2 ՔՀՀ 7 թիվ 36 եւ 37 անավարտ շենքերի շինարարություն և այլ

բնակաշինարարական աշխատանքներ (4.49 մլն դրամ), բնակաշինարարական աշխատանքներ ք. Տաշիրում (13.00 մլն դրամ),

Վանաձորի, Ալավերդու, Ախթալայի, Թումանյանի, Շամլուղի, Ստեփանավանի, Տաշիրի Ձորագետավանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում,

• **Կրթական համակարգի օբյեկտների նորոգում**

Վանաձորի թ. 24 դպրոցի, «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի և Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում, Վանաձորի թիվ 12 դպրոցի տանիքի վերանորոգում, Դեբետի դպրոցի շենքի վերանորոգում, Լեռնապատի դպրոցի միջանցքի սալիկապատում, Օձունի թիվ 1, Ձորագյուղի մանկապարտեզների վերանորոգում, Ֆիլիտովոյի դպրոցի ջրամատակարարման համակարգի նորոգում, Անտառամուտի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում:

• **Մշակութային օբյեկտների կառուցման և նորոգման ոլորտում**

Քոբայրավանքի, Սանահինի վանքի և «Լոռի բերդ» ամրոցի հիմնանորոգում, Վանաձորի է.Կզարթմյանի անվ. Երաժշտական դպրոցի վերանորոգում, Հարթագյուղի, Գեղասարի, Արևաշողի համայնքային կենտրոնների կառուցում, Բազումի մշակույթի կենտրոնի կառուցում:

• **Առողջապահական ոլորտի օբյեկտների նորոգում**

Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգում (3-րդ փուլ), «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում, Շահումյանի ԱԱԿ-ի շենքի հիմնանորոգում

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1. Ճանապարհաշինություն

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 932.9 կմ, այդ թվում՝ միջպետական ա/ճ - 218.9 կմ, հանրապետական ա/ճ - 490.9 կմ, մարզային ա/ճ - 223.1կմ:

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ – 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ – 5 հատ

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. ճանապարհաշինության ոլորտի համար պահանջվող գումարը եղել է 2,378.00 մլն դրամ է, սակայն բոլոր աղբյուրներով պլանով նախատեսվել է կատարել 7,720.64 մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ 7,436.64 մլն-ը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներով, որից 406.00 մլն դրամը հրատապ աշխատանքների պլանով և 284.64 մլն դրամ Համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

2012թ. մարզի ճանապարհաշինական ոլորտում իրականացվել է **2,399.18** մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում պետական բյուջեից՝ **2,139.84** մլն դրամ, որից **868.24** մլն դրամը՝ հրատապ աշխատանքների փուլի ծրագրերով: Համայնքային ֆոնդային բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվել է **259.35** մլն դրամ ծավալով փողոցների ասֆալտապատման ու վերանորոգման աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզում պետական բյուջեից և այլ միջոցներից ճանապարհաշինության գծով 2012թ. հատկացումները և իրականացված աշխատանքները

				մլն դրամ	
Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր	Կատարվել է առ	Ծանոթություն	

		(մլն դրամ)	30.12.2012թ. (մլն դրամ)	
	Ընդամենը մարզում՝	7,720.64	2,399.18	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	7,436.00	2,139.84	
	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	7,030.00	1,203.596	
1	Միջպետական նշանակության ա/ճան.	7.267	7.267	
2	Ա/ճ Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման	7.267	7.267	
	43-կմ-ում հենապատի փլվածքի վերականգնում	2.691	2.691	
	45-կմ-ում հենապատի փլվածքի վերականգնում	4.576	4.576	
	Հանրապետական նշանակության ա/ճան.	754.719	754.719	
1	Հ-24 Գյուլագարակ-Թումանյան կայարան Մ-6 ա/ճանապարհի Կուրթան-Ձորագետ հատված 10-րդ, 11-րդ կմ-ում հենապատի կառուցում	21.57	21.57	
2	Հ-25 Մ-6 Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ Ա/ճ շեպերի ուղղման ու քարաթափման աշխատանքներ	6.85	6.85	
3	Հ-180 Ալավերդի-Ջիլիգա-Վրաստանի սահման Ա/ճ ստորին հենապատի և ջրահեռացման խողովակի վերանորոգում	6.299	6.299	
4	Հ-184 Մ-3 Նորաշեն-Սարչապետ (Նորաշեն-Սարչապետ հատված) հիմնանորոգում	720.00	720.00	
	Մարզային նշանակության ա/ճան.	511.61	441.61	
1	Լոռու մարզի Նոր Խաչակապ գյուղի կամրջի վերանորոգում	31.61	31.61	
2	Լոռու մարզի Հարթագյուղ համայնքը Վանաձոր-Գյումրի մայրուղուն միացնող Ա/ճ հատվածի հիմնանորոգում: Հարթագյուղ-Խնկոյան միջհամայնքային ճանապարհի վերանորոգում	390.00	390.00	
3	Մ-6 31-րդ կմ-ում Թունելի վերանորոգման աշխատանքներ	20.00	20.00	
4	Լոռի-Բերդ տանող ճանապարհի նորոգում	70.00		հանվել է
	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	474.001	436.60	
1	Մարզային ա/ճանապարհների պահպանում եւ շահագործում	68.001	68.001	
	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	406.00	868.24	
1	ք. Վանաձորի փողոցների ասֆալտապատում	200.00	394.59	
2	ք. Սպիտակի փողոցների ասֆալտապատում	30.00	68.32	
3	ք. Ստեփանավանի փողոցների ասֆալտապատում	54.00	97.04	
4	ք. Ալավերդու փողոցների ասֆալտապատում	30.00	69.56	
5	Տաշիրի փողոցների ասֆալտապատում	44.00	85.91	
6	Լոռի-Բերդ տանող ճանապարհի նորոգում	28.00	28.00	
7	Հաղպատի փողոցների փոսային նորոգում		34.16	
8	Օձուն համայնքի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում		19.08	
9	Կուրթանի ճանապարհների նորոգում և ասֆալտապատում		15.00	
10	Եղեգնուտ համայնքի ճանապարհի վերանորոգում		23.60	
11	Շամլուղ-Բենդիկ ճանապարհահատվածի վերանորոգում		3.82	
12	Ախթալա համայնքի ճանապարհների վերանորոգում		14.16	
13	Լեջան համայնքի ճանապարհների վերանորոգում		10.00	

14	Ալավերդի համայնքի Թումանյան փողոցի գետափնյա հենապատի վերանորոգում		5.00	
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	284.64	259.35	
1	ք. Վանաձորի փողոցների ասֆալտապատում	164.05	169.48	
2	ք.Ստեփանավանի փողոցների ասֆալտապատում	10.00	10.54	
3	ք. Ալավերդու փողոցների ասֆալտապատում	1.90	1.90	
4	ք. Տաշիրի փողոցների ասֆալտապատում	14.50	10.21	
5	Շամլուղի փողոցների վերանորոգում	1.50	0.00	
6	Գուգարք գյուղի փողոցների վերանորոգում	4.30	4.62	
7	Դարպաս գյուղի ճանապարհների վերանորոգում	2.40	0.00	
8	Դեբետ գյուղի ճանապարհների վերանորոգում	1.76	0.46	
9	Եղեգնուտ գյուղի ճանապարհների վերանորոգում	2.50	2.47	
10	Լերմոնտով գյուղի ճանապարհների վերանորոգում	11.74	15.32	
11	Լեռնապատ գյուղի ճանապարհների վերանորոգում	1.00	1.34	
12	Հալավար գյուղի ճանապարհների վերանորոգում	2.30	0.00	
13	Շահումյան գյուղի ճանապարհների վերանորոգում	2.18	2.49	
14	Քարաբերդ գյուղի ճանապարհների վերանորոգում	1.00	0.00	
15	Ֆիդլետով գյուղի ճանապարհների վերանորոգում	3.44	0.00	
16	Ամրակից գյուղի ճանապարհների վերանորոգում	0.75	0.00	
17	Կաթնաղբյուր գյուղի ճանապարհների վերանորոգում	2.00	0.00	
18	Կուրթան գյուղի ճանապարհների վերանորոգում	3.46	4.04	
19	Աքրի գյուղի ճանապարհների վերանորոգում	19.33	5.43	
20	Թեղուտ գյուղի ճանապարհների վերանորոգում	2.32	8.30	
21	Ծաթեր գյուղի ճանապարհների վերանորոգում	0.20	0.14	
22	Հազվի գյուղի ճանապարհների վերանորոգում	8.00	7.97	
23	Շամուտ գյուղի ճանապարհների վերանորոգում	0.20	0.20	
24	Կաթնառատ գյուղի ճանապարհների վերանորոգում	1.00	0.20	
25	Ձյունաշող գյուղի ճանապարհների վերանորոգում	0.20	0.16	
26	Ձորամուտ գյուղի ճանապարհների վերանորոգում	0.20	0.49	
27	Նովոսելցով գյուղի ճանապարհների վերանորոգում	0.71	0.30	
28	Սարչապետ գյուղի ճանապարհների վերանորոգում	1.20	1.20	
29	Արևաշող գյուղի ճանապարհների վերանորոգում	4.00	4.00	
30	Գոգարան գյուղի ճանապարհների վերանորոգում	1.00	1.00	
31	Լեռնանցք գյուղի ճանապարհների վերանորոգում	2.20	0.25	
32	Լեռնավան գյուղի ճանապարհների վերանորոգում	1.60	1.40	
33	Լուսաղբյուր գյուղի ճանապարհների վերանորոգում	1.00	1.00	
34	Ծ ա ղ կ ա բ ե ռ գյուղի ճանապարհների վերանորոգում	0.74	1.42	
35	Կաթնաջուր գյուղի ճանապարհների վերանորոգում	3.15	0.22	
36	Ղուրսալի գյուղի ճանապարհների վերանորոգում	0.95	0.04	
37	Նոր Իսաչակապի ճանապարհների վերանորոգում	0.40	0.20	
38	Շենավան գյուղի ճանապարհների վերանորոգում	0.56	0.06	
39	Շիրակամուտ գյուղի ճանապարհների վերանորոգում	0.39	0.25	
40	Ջրաշեն գյուղի ճանապարհների վերանորոգում	3.73	1.05	
41	Սարամեջ գյուղի ճանապարհների վերանորոգում	0.77	1.22	

5.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և

արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի 7 քաղաքների և 56 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի («Ալավերդի» և «Սպիտակ» տեղամասերի ու «Ստեփանավան», «Տաշիր» ենթատեղամասերի միջոցով) և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը կատարվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2012թ. ջրամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը կազմում է 434.0 մլն դրամ, փաստացի ՏԱՊ-ով պլանավորվել է կատարել 3,659.59 մլն դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ 153.50 մլն-ը՝ ՀՀ պետբյուջեի միջոցներով: Ընդ որում պետբյուջեի միջոցները ամբողջովին պլանավորված է հրատապ աշխատանքների ծրագրով:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումն իրականացվում է գերմանական վերականգնման բանկի (KfW) և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրով; «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավման նպատակով «Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրով պլանավորվել է 250.0 մլն դրամի աշխատանք, սակայն 2012թ իրականացվել է 657.70 մլն դրամի աշխատանք: 2012թ. ՏԱՊ-ի հաստատումից հետո ձեռք է բերվել համաձայնություն ՄԱԿ-ի ծրագրով և համայնքային բյուջեների համաֆինանսավորմամբ 11.4 մլն դրամ ծավալով Ծաղկաշատ (8.1 մլն դրամ) և Չկալով (3.3 մլն դրամ) համայնքների ջրագծերի կառուցման աշխատանքներ կատարելու համար: Աշխատանքները ավարտվել են:

2012 թվականին մարզի տարբեր համայնքների խմելու ջրի մատակարարման բարելավման նպատակով կատարվել է շուրջ 1,993.44 մլն դրամի համապատասխան աշխատանքներ (այդ թվում՝ պետ բյուջեից հրատապ ծրագրերով 161.22 մլն դրամ, համայնքային բյուջեներով՝ 40.15 մլն դրամ), որոնք ներկայացված են ստորև՝

Ջրամատակարարման ոլորտում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Հ/Հ	Շինարարական աշխատանքների անվանումը ըստ պատասխանատուների	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.12թ. (մլն դրամ)
	Ընդամենը մարզում՝	3,659.59	1,993.44
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	153.50	161.22
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	153.50	161.22
1	Մեղվահովիտի խմելու ջրի ցանցի կառուցում	41.00	41.00
2	Արեւաշողի ջրամատակարարման համակարգի կառուցում	70.00	70.00
3	Սպիտակի կոյուղագծերի կառուցում	20.00	20.00
4	Լեռնահովիտի համայնքային ջրագծի հիմնանորոգում	10.00	10.00
5	Միխայլովկայի խմելու ջրի ջրագծի վերանորոգում	4.50	4.50
6	Լավար-Շամլուղ խմելու ջրի ջրագծի նորոգում	5.00	5.00
7	Շամլուղի կոյուղու նորոգում	3.00	3.00
8	Շամլուղ համայնքի խմելու ջրագծի վերանորոգում		4.72

9	Արժնի համայնքի խմելու ջրագծի վերանորոգում		3.00
II	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3,428.90	1780.70
	KFW-Գերմանական վարկային ծրագիր	3,167.50	1,102.90
1	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավում		
2	«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարում և ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավում	250.0	657.70
	Ճոճկան, Մեծ Այրում, Կաճաճկուտ, Ախթալա, համայնքների ջրագծերի վերանորոգում (World Vision)		20.1
	ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՏԱՊ-ին)	11.40	3.30
3	Չկալովի ջրագծի կառուցում (ՄԱԿ, Համայնքային բյուջե)	3.30	3.30
4	Ծաղկաշատի ջրագծի կառուցում (ՄԱԿ, Համայնքային բյուջե)	8.10	8.10
III	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ Մարզի 31 համայնքներում խմելու ջրի մատակարարման բարելավում և կոյուղագծերի վերանորոգում	77.19	40.15

5.3. Գազամատակարարում

Գազիֆիակցումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը:

Առ 01.01.2013թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի բնակավայրերում վերականգնվել և գազիֆիկացվել են թվով 33041 առանձնատներ և 28591 բնակարաններ, որից թվով 29478-ը Վանաձոր քաղաքում:

2012 թվականին բաժանորդների թվաքանակը աճել է 286-ով, որից 141 բնակարաններ և 145 առանձնատներ:

2012 թվականին գազաֆիկացման ոլորտում նախատեսվել է կատարել 108.48 մլն դրամի աշխատանքներ, որից 35.50 մլն դրամ պետ. բյուջեից՝ հրատապ ծրագրով և 72. 98 մլն դրամ 12 համայնքների ֆոնդային բյուջեներից: Տարվա ընթացքում կատարվել է 140.98 մլն դրամ ծավալով աշխատանքներ, որից 99.70 մլն դրամ պետ. բյուջեից՝ հրատապ ծրագրերով, 8.08 մլն դրամ 2 համայնքների ֆոնդային բյուջեներից, 8.0 մլն դրամ ՄԱԿ-ի ծրագրով և 25.2 մլն դրամը՝ ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի ֆինանսավորմամբ:

Գազամատակարարման ոլորտում 2012 թ. Լոռու մարզում նախատեսված և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2012թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.2012թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	108.48	140.98	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	35.50	99.70	

I	ՀՀ Լոռու մարզպետարան	35.50	99.70	
1.	Սպիտակ Փախստականների թաղամասի գազաֆիկացում	4.50	4.50	ՀԾ
2.	Կողեսի գազամատակարարման ներքին ցանցի կառուցում	8.00	8.00	ՀԾ
3.	Մղարթի գազամատակարարման ներքին ցանցի կառուցում	15.00	15.00	ՀԾ
4.	Քարինջի գազամատակարարման համակարգի ցանցի կառուցում՝ դպրոցի ուղղությամբ	8.00	8.00	ՀԾ
5.	գ.Յաղրանի գազամատակարարման համակարգի վերանորոգում		9.00	ՀԾ
6.	Մարց համայնքի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում		4.79	ՀԾ
7.	Ապավեն համայնքի գազատարի ներքին ցանցի վերանորոգում/Լրաց/		4.00	ՀԾ
8.	Մեծ Այրում համայնքի գազատարի կառուցման նպատակով համայնքին աջակցության ցուցաբերում (սուբվենցիա)		2.50	ՀԾ
9.	Արջուտ համայնքի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում		5.00	ՀԾ
10.	Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում		15.00	ՀԾ
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	72.98	8.08	
1	ներդրումներ գազաֆիկացման ոլորտում (12 համայնքներ)	72.98	8.08	
	Եղեգնուտի գազամատակարարման ներքին ցանցի կառուցում		8.00	ՄԱԿ
	ՀՀ ԿԱ ԳՏՏՁ ԾԻԳ		25.2	
1.	Շիրակամուտ համայնքի գազաֆիկացում		9.0	
2.	Սպիտակի Գրիգոր Լուսավորչ թաղամասի գազաֆիկացում		16.2	

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Տարածքային կառավարում

Տարածքային կառավարման հիմնական գերակայություններից մեկը հանդիսացել է մարզային և տեղական իշխանությունների փոխհարաբերությունների զարգացումը: Իրականացվել է իրավական և մասնագիտական վերահսկողություն ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ղեկավարների, ինչպես նաև ավագանիների կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ:

Միջոցներ են ձեռնարկվել մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանց ստեղծելու ուղղությամբ:

Տարածքային կառավարման բաղադրիչի նպատակն է եղել բարելավել պետական կառավարումը մարզում՝ ապահովելով կառուցվածքային կառավարչական համակարգերի և մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացումը:

- Մարզպետի կողմից ստեղծված վարչական վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն 2012թ.-ին իրականացրել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 38 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ:

- 2012թ.-ին մարզպետարանում աշխատող 36 քաղաքացիական ծառայողներ մասնակցել են քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:
- Կարևորվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերը համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովելու խնդիրը: Մարզի 113 համայնքներից 99-ը ունեն համակարգիչներ, ինտերնետ կապ՝ 59-ը:
- Աջակցություն է ցուցաբերվել մարզի զինկոմիսարիատներին՝ կցագրման, գարնանային գորակոչի աշխատանքների կազմակերպման հարցերում:
- Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ (անշարժ գույքի և կադաստրի ստորաբաժանումներ, անձնագրային բաժիններ, զինկոմիսարիատներ, վիճակագրության ծառայություն, քաղաքաշինության տեսչության մարզային բաժիններ, մարզային փրկարարական վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

6.2 Տեղական ինքնակառավարումը և ապակենտրոնացում

Բարելավվել է ինքնակառավարման մակարդակը, զարգացել է համայնքային ծառայության համակարգը, խորացվել է առկա համագործակցության մակարդակը համայնքների միջև, բարձրացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները:

2012թ.-ի ՄԶԾ ամենակարևոր խնդիրներից մեկը եղել է ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը:

Աշխատանքներ են իրականացվել ՏԻՄ-երի գործունեությանը հասարակության իրազեկության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ և ապահովելու քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի քննարկման, մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

Կազմակերպվել են համայնքների ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումներ:

Համայնքային ծառայության համակարգի զարգացումն ապահովելու համար իրականացվել են համայնքային ծառայողների վերապատրաստումներ: Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալները մշտապես հավաքագրվել և մուտքագրվել են միասնական հանրապետական շտեմարանում:

2012թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային բյուջեների կազմման, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները և համայնքների բնակչության ցանկությունները: ՄԶԾ-ի ամենակարևոր խնդիրներից մեկը եղել և մնում է ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումն ու տեղական եկամուտների հավաքագրման աճը պլանավորված մակարդակին հասցնելը:

2012թ.-ին՝

- Համագործակցելով «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի հետ կազմակերպվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի 134 պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը:
- Համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ կազմակերպվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի 19 պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը:
- Համագործակցելով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ կազմակերպվել է մարզի 22 համայնքների ղեկավարների, ավագանու 76 անդամների վերապատրաստումը:
- Կազմակերպվել և անցկացվել են մարզի խորհրդի 6 նիստեր:
- Մշտական մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման գործում:
- Իրականացվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի 144 համայնքային ծառայողների ատեստավորումներ և 61 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել և համապատասխանեցնել գործող օրենսդրությանը:
- Մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և նրանց աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և գործավարության կազմակերպման հարցերում:
- 2012թ.-ի ընթացքում աճել են մարզի համայնքների ՏԻՄ-երի բյուջետային կարողությունները համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման աճի շնորհիվ, հասցնելով պլանավորված մակարդակի 87.8 %-ի (2012թ.-ի փաստացի կատարողականը 2011թ.-ի նկատմամբ 100.5%):

6.2.1 Համայնքային զարգացման ծրագրեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2012թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա:

Խորհրդատվական և մեթոդական աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման և մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքներում:

Մարզպետի կողմից հաստատվել են մարզի բոլոր 113 համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները: Մարզի թվով 90 կազմակերպություններ կազմել են քաղաքացիական պաշտպանության պլաններ, իսկ թվով 200 կազմակերպություններ՝ քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցեր:

Համայնքների մասնակցությամբ անց են կացվել շտաբային ուսումնավարժություններ, հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն: Անց են կացվել օբյեկտային վարժանքներ, իսկ մարզում գործող թվով 5 կազմակերպությունների կողմից նաև հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

2012 թվականի ընթացքում կազմվել և հաստատվել են «ՌԻժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործողությունների» պլանները, ճշգրտվել են «ՀՀ Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության» և «ՀՀ Լոռու մարզի տարահանման» պլանները:

6.3 Քաղաքացիական հասարակություն

Տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ են հեռարձակվել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը, պարբերաբար հրապարակվել են առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:
- ✓ Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:
- ✓ Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպվել են մարզպետի այցելությունները համայնքներ, ինչպես նաև տարածաշրջանային կենտրոններում կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ:
- ✓ Մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպվել են ուղիղ եթերներ, հանրությանը հնարավորություն ընձեռնելով իրենց հուզող հարցերը ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու և պատասխանը անմիջապես լսելու համար:
- ✓ Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցել են մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:
- ✓ Պարբերաբար իրականացվել են մարզպետարանի ինտերնետային կայքէջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները: Թարմացվել են կայքի նորություններ բաժինը, տեղադրվել են համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների վերաբերյալ հայտարարությունները:

- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն և հրապարակայնություն ապահովելու նպատակով՝ ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղադրված տեղեկատվական ցուցատախտակներ առկայության և այդ տախտակների վրա տեղադրվող համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումների, այլ կարևոր բնույթի տեղեկատվության արդիականությանն ու փոփոխման պարբերաբարականությանը:

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտաքին կապերի ոլորտում 2012թ-ին Լոռու մարզպետի աշխատանքների կատարողականի վերաբերյալ

h/h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		նախատեսված	Չնախատեսված, սակայն փաստացի կատարված	նախատեսված	փաստացի	
		2ա	2բ	3ա	3բ	4
		Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KfW գերմանական վարկային ծրագիր		2012թ	2012թ-ի ընթացքում	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ծրագրի կողմից իրականացվել են ջրամատակարարման համակարգերի բարելավման 1102.9 մլն դրամի աշխատանքներ
	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում	«Թափոնների կառավարում – ԵՀԳԳ Արեւելք» տարածաշրջանային ծրագիր		2009-2013թթ	2012թ	<p>Լոռու մարզում իրականացվել է թափոնակուտակումների վերաբերյալ տվյալների հավաքագրում, գույքագրում, քարտեզագրում, որի հիման վրա մշակվել է թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն, որը նախատեսում է ամբողջ մարզի տարածքում ստեղծել 2-3 եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր:</p> <p>Իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել է մարզի թափոնների կառավարման ռազմավարություն նախագիծ, որն իր մեջ ներառում է.</p> <ul style="list-style-type: none"> • թափոնների կառավարման ռազմավարության հիմնական տվյալները, • թափոնների կառավարման տարբերակների մշակում ՀՀ Լոռու մարզի համար, • ՀՀ Լոռու մարզում թափոնների կառավարման ռազմավարության իրականացմանն ուղղված ֆինանսական առաջարկություններ, • ՀՀ Լոռու մարզում թափոնների կառավարման կազմակերպման ինստիտուցիոնալ խնդիրները <p>Ծրագիրն ընթացքի մեջ է:</p> <p>Ս.թ. հունիսի 13-ից 15-ը ծրագրի շրջանակներում Վրաստանի Հանրապետություն է մեկնել Լոռու պատվիրակությունը: Այցի նպատակը ճանաչողական էր, ուսումնասիրել տեղի աղբավայրերն եւ աղբի վերամշակման արտադրամասերը:</p> <p>Նոյեմբերին «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի կոնսերվացված «Նազիկ» պղնձաբարի 1հա տարածքում իրականացվել է ռեկուլտիվացիոն և կանաչապատման աշխատանքներ</p>

Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստան (USAID)		2012թ	2012թ.-ի ընթացքում	<p>Լոռու մարզի 6 քաղաքային եւ գյուղական համայնքներում իրականացվել են՝</p> <ul style="list-style-type: none"> ➢ Դեբեդ համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացում 5.2մլն (համաֆինանսավորում է Ջինիշյան հիմնադրամը՝ 2.3մլն դրամ) ➢ Դսեղ համայնքի մշակութային կյանքի, զբոսաշրջության ակտիվացմանն ուղղված միջոցառումներ՝ 5.2մլն (համաֆինանսավորում է Ջինիշյան հիմնադրամը՝ 1.3մլն դրամ) ➢ Ծաթեր համայնքի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ 3.5մլն (համաֆինանսավորում է Ջինիշյան հիմնադրամը՝ 1.3մլն դրամ) ➢ Վանաձոր համայնքի արտաքին լուսավորության համակարգի կառուցում՝ 6.2մլն դրամ ➢ Ալավերդու թիվ 4 մանկապարտեզի վերանորոգում եւ գույքով համալրում՝ 6.2մլն դրամ ➢ Ախթալա համայնքի համայնքային կենտրոնի շենքի եւ արվեստի դպրոցի հիմնանորոգում՝ 12.4մլն դրամ
«Ասիական բանկ» վարկային ծրագիր		2012թ	2012թ.-ի ընթացքում	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքներում իրականացվել է խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ 657.7 մլն դրամի արժողությամբ
«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ		2012 թ	2012թ-ի ընթացքում	<p>Մարզում գործող երկու գրասենյակների միջոցով իրականացվել են ընդհանուր առմամբ 187.017 մլն դրամի աշխատանքներ, որից՝</p> <ul style="list-style-type: none"> • Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջանի 10 քաղաքային եւ գյուղական համայնքներում իրականացվել են 118.035 մլն դրամ • Ստեփանավանի գրասենյակի միջոցով՝ Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 68.982 մլն դրամ
«Շեն» ԲՀԿ եւ USID (ԱՄՆ ՄԶԳ)		2012թ	2012թ	Կազմակերպությունն իրականացրել է 28.0 մլն դրամի աշխատանքները՝ <ol style="list-style-type: none"> 1. Շահումյանի Համակարգչային կենտրոնի հիմնանորոգում և գործարկում – 8.0 մլն դրամ 2. Թեղուտ համայնքի մանկապարտեզի կահավորում 10.0 մլն դրամ 3. Արեւաշող համայնքի մանկապարտեզի կահավորում 10.0 մլն
	ՄԱԿ-ի պարենի ծրագիր		2012թ	«Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում մարզի 142 դպրոցների մոտ 9000 1-4-րդ դասարանների աշակերտներ օգտվում են անվճար տրամադրվող սննդից

		ՄԱԿ, «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագիր		2012թ –ի ընթացքում	Իրականացվել են՝ Չկալովի ջրագծի կառուցում – 3.3 մլն դրամի աշխատանքներ Ծաղկաշատի ջրագծի կառուցում - 8.1 մլն դրամի աշխատանքներ Մարզի 3 դպրոցներում վերանորոգման աշխատանքներ՝ Ախթալայի թիվ 2 դպրոցի վերանորոգում – 3.8 մլն դրամ Ձորամուտի դպրոցի վերանորոգում – 4.0 մլն դրամ Սարատովկայի դպրոցի վերանորոգում – 3.8 մլն դրամ	
		ՄԱԿ-ի (UNDP) ծրագիր		2011թ	Իրականացվել են՝ ➢ Թումանյանի համայնքի մշակութային կյանքի ակտիվացում 3.04մլն դրամի աշխատանքներ ➢ Լորուտ համայնքի մանկապարտեզի սանհանգույցի վերանորոգում 0.8մլն դրամի աշխատանքներ ➢ Գարգառ համայնքի նախադպրոցական երեխաների ֆիզիկական դաստիարակության ուղղված աշխատանքներ՝ 2.689մլն դրամ Եղեգնուտ համայնքում 730մ երկարությամբ գազամատակարարման ցանցի կառուցում՝ 8.0մլն դրամ	
		Շվեդարական «Կազա» հիմնադրամ		2012թ 1-ին կիսամյակ	<ul style="list-style-type: none"> Գոգարան համայնքում գործող «Ջարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է տրակտոր իր գյուղատնտեսական գործիքներով և ապրանքային վարկի ձևով սերմացուներ ու պարարտանյութ (շուրջ 3.5 մլն դրամ): Արջուտ համայնքում գործող «Ակունք» կոոպերատիվին տրամադրվել է 16.0 մլն դրամ՝ 200 գլուխ մայր ոչխարներ ձեռք բերելու նպատակով: 	
2.	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում	ՀՀ Լոռու մարզի և ՉԺՀ Շանսի նահանգի միջև համագործակցության կապերի հաստատում և զարգացում		2011թ	2012թ մայիս	<p>Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի նահանգապետ Ձյուն Վանի հետ ստորագրված համագործակցության արձանագրության շրջանակներում ՀՀ ՏԿՆ է ներկայացվել Լոռու մարզից հնարավոր համագործակցությունների վերաբերյալ ծրագրեր, չինական կողմին փոխանցելու նպատակով.</p> <ol style="list-style-type: none"> Վալեքս խմբի նոր հանքավայրի հետազոտման, շահագործման բիզնես ծրագիր Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի զարգացման բիզնես ծրագիր, 3. 0 մլն ԱՄՆ դոլար արժողության ներդրում Մայիսին իրականացվեց Վալեքս խմբի պատվիրակության այցը Չինաստան

<p>Համագործակցություն Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս Ալպ Կոտ դ'Ազյուր մարզի Ձինվորական եւ Հյուրընկալ Երուսաղեմի Սուրբ Ղազար Միաբանության միջեւ Պրովանս կոտ Դ'Ազյուր առաջնորդական կարգադրություն N09-01</p>	<p>2012թ</p>	<p>2012թ.-ի ընթացքում</p>	<p>Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեի աջակցությամբ 2010-12թ-ին «Սպիտակ» ծրագրի շրջանակներում, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի եւ մարզի մյուս առողջապահական հիմնարկների հետ շարունակվել են իրականացվել բարեգործական ծրագրեր, մատակարարելով՝ դեղորայք եւ բժշկական պարագաներ:</p>
<p>ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության եւ «ԳՐԵՖ» կազմակերպության միջև 2008 թվականին ստորագրված եռակողմ համագործակցության պայմանագրի շրջանակներում</p>	<p>2008-2012</p>	<p>2012թ -ի ընթացքում</p>	<p>Շարունակվել է «ԳՐԵՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության առաքելությունը Լոռու մարզում, որի ներկայացուցիչն իրականացնում է ՎՊՄԻ-ի, ԵԿՏԱ-ի Վանաձորի մասնաճյուղի եւ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի ֆրանսերեն դասավանդող դասախոսների, ինչպես նաեւ, Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ</p>

<p>Լոռու մարզպետարանի եւ Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի միջեւ Համագործակցության շրջանակային պայմանագիր</p>	<p>2008թ</p>	<p>2012թ-ի ընթացքում</p>	<p>4. Դեկտեմբերի 9-ից 13-ը Լոռու մարպետ Ա.Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնել էր Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեզիոն: Այցի ընթացքում երկու մարզերի ղեկավարները ստորագրեցին «2012-2014թթ համագործակցության համաձայնագիր», որը նախատեսում է 175.0հազ եվրո արժողությամբ ներդրում Լոռու մարզում տուրիզմի եւ անասնապահության ծրագրերի իրականացում Ֆրանկոֆոնիայի զարգացմամբ:</p> <p>5. Հոկտեմբերի 1-ից 6-ը ՊԱԿԱ-ի ռեզիոնալ խորհրդի հայաստանյան պատասխանատու Լոռա Կառլոնի գլխավորությամբ Լոռու մարզ էին ժամանել տուրիզմի զարգացման երկու փորձագետներ, որոնք ուսումնասիրելով տուրիզմի զարգացման հնարավորությունները մարզի 5 տարածաշրջաններում՝ առաջարկեցին Թումանյանի տարածաշրջանում ստեղծել տուրիզմի զարգացման կենտրոն:</p> <p>Քննարկվեցին նաեւ 2012-2014թթ ՊԱԿԱ-ի եւ Լոռու մարզերի միջեւ համագործակցության գործողությունների ծրագիրը:</p> <p>6. Հունիսի 3-7-ը կրկին մարզ էր այցելել ՊԱԿԱ-ի պատվիրակությունը Միջազգային կապերի եւ Միջերկրական համագործակցության պատասխանատու Գիյոմ Լալանժի գլխավորությամբ: Այցելության նպատակը՝ Լոռու մարզում անասնաբուծության, տուրիզմի և գարնտուրիզմի բնագավառներում ուսումնասիրությունների իրականացում, ինչպես նաեւ 2012-2014թթ մարզում իրականացվելիք ծրագրերի գործողությունների պլանի քննարկում:</p> <p>7. Մարտի 20-21-ը երկօրյա այցով Վանաձորում էին ՊԱԿԱ-ի ռեզիոնալ խորհրդի պատվիրակությունը, նախագահի խորհրդական Ժերար Բոդինյեի գլխավորությամբ:</p> <p>Հանդիպման ընթացքում քննարկվել են հարցեր երկու մարզերի հետագա համագործակցության վերաբերյալ.</p> <ul style="list-style-type: none"> • Ֆրանկոֆոնիայի զարգացման ուղիներ • Տուրիզմի զարգացում, այդ թվում՝ գյուղական տուրիզմ • Ռիսկերի կանխատեսում եւ կառավարում • 2012 թվականի ծրագրերի ամրապնդում /գյուղատնտեսություն, առողջապահություն, կրթություն, արտակարգ իրավիճակներ/ <p>Ապրիլ-մայիս ամիսներին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում կազմակերպվել էր Ֆրանսիական Մոնտ թերթի ծաղրանկարիչ Ժան Պլատյուի ցուցահանդեսը «Նկարի խաղաղություն» վերնագրով:</p>
---	--------------	--------------------------	--

			2012թ-ի ընթացքում	<p>5. Փետրվարի 29-ին Ֆրանսիական DSF (Ցավեր առանց սահմանների) ծրագրի պատասխանատու, մանկահոգեբույժ ժերար Ռոբենի այցը Վանաձոր: DSF կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» ՀԿ-ի միջոցով կազմակերպվել էր դեռահասների վարվելակերպի և հոգեբանական դժվարությունների վերաբերյալ կոնֆերանս – քննարկում Վանաձոր քաղաքի բուժհաստատությունների, մանկատան եւ խնամքի կենտրոնի հոգեբան-մասնագետների եւ շահագրգիռ այլ հաստատությունների մասնագետների մասնակցությամբ</p> <p>6. Շարունակվել է Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազյուրի մարզի և Բանյո քաղաքի համատեղ ֆինանսավորմամբ «Նոենի» ՀԿ-ի կողմից իրականացվում է Վանաձորի քաղաքի 4 պոլիկլինիկաներում, Վանաձորի մանկատանը և երեխաների խնամքի կենտրոնում ADBB մայրերի ինքնաջակցման խմբերի, խորհրդատվությունների, հոգեշարժողականության խմբերի կազմակերպում, «Փոքրիկ նապաստակ» ծրագրի իրականացում, մանկապարտեզներում հոգեշարժողականության և այլ տիպի աշխատանքների իրականացումը</p>
	Համագործակցություն Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև		2012թ-ի ընթացքում	<p>1. Լոռու մարզպետի հրավերով հոկտեմբերի 4-ից 8-ը Լոռու մարզ էր ժամանել Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզի պատվիրակությունը եւ տեղում կնքվեցին պայմանագրեր Ստեփանավան-Բրասլավ քաղաքների, Տաշիր քաղաքի եւ Լեպելի շրջանային գործադիր կոմիտեի միջև:</p> <p>Հետագա երկկողմ արդյունավետ համագործկցության համար Վանաձոր-Վիտեբսկ քաղաքների ղեկավարները քննարկեցին գործողությունների պլանը, իսկ մյուս քաղաքների կողմից կազմվում են գործողությունների ծրագրեր:</p> <p>2. Հուլիսի 16-ից 18-ը Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի մարզ էր մեկնել Լոռու մարզի պատվիրակությունը, մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ: Փոխադարձ համաձայնությամբ երկու մարզերի միջև կնքվել է «Համաձայնագիր Բելառուսի Հանրապետության Վիտեբսկի շրջանի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի միջև»:</p> <p>Եղբայրացման եւ համագործակցության պայմանագրեր են կնքվել նաեւ Վանաձոր-Վիտեբսկ, Սպիտակ-Օրշա քաղաքների միջև:</p> <p>3. Մայիսի 26-ին Վիտեբսկի մարզի Պոլոցկ քաղաքում Ալավերդու քաղաքապետի եւ Պոլոցկի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահի կողմից կնքվեց «Պայմանագիր ՀՀ Ալավերդի եւ Բելառուսի Հանրապետության Պոլոցկ քաղաքների եղբայրության»</p>

		Լոռու մարզը որպես Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի լիիրավ անդամ		2012թ	2012թ –ի ընթացքում	Էլեկտրոնային փոստի միջոցով շարունակվել է Եվրոպական Ռեգիոնների Ասամբլեայի գրասենյակի հետ կապը, իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումներ
		Ֆրանկոֆոն Ռեգիոնների Ասոցիացիայի լիիրավ անդամ		2011թ նոյեմբերի 13	2012թ մարտ-մայիս	Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի մեկնայակի շրջանակներում, մարտ ամսից Լոռու մարզի դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում (Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտ) կազմակերպվել են Հայաստանում ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ:
		Վանաձոր-Լայպցիգ (Գերմանիայի դաշնություն)		2011թ	2012թ հունիս	Հունիսի 18-ից 20-ը տեղի ունեցավ Գերմանիայի Լայպցիգ քաղաքի պատվիրակության այցը Վանաձոր: Այցի նպատակն էր երկու քաղաքների միջև հետագա համագործակցության արդյունքում Փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցման կենտրոնի ստեղծման նախնական աշխատանքների կազմակերպում
		Ալավերդի – Դաուգավպիլս (Լատվիայի Հանրապետություն) եղբայրության պայմանագրի կնքում			2012թ	Հոկտեմբերի 1-ից 3-ը Ալավերդի քաղաք էին ժամանել Լատվիայի Հանրապետության Դաուգավպիլս քաղաքի պատվիրակությունը քաղաքային դումայի նախագահ Կուլակովայի գլխավորությամբ: Հոկտեմբերի 2-ին կնքվեց «ՀՀ Ալավերդի եւ ԼՀ Դաուգավպիլս քաղաքների եղբայրության պայմանագիր»
		ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջև կնքված փոխըմբռնման հուշագիր		2011թ	2012թ.	Հուշագրի շրջանակներում անց են կացվում մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումներ, հասարակական լուսմեր մարզպետարանում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուսմերին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ՋԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ
3.	Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա	ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր համատեղ դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչի այցը Լոռու մարզ			2012թ	Հոկտեմբերի 23-ին ճանաչողական այցով Լոռու մարզում էր ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր համատեղ դեսպան տիկին Քեթրին Ջեյն Լիչը: Նա հետաքրքրված էր մարզի զարգացման ծրագրերով եւ բիզնեսի զարգացման հնարավորություններով մարզում: Նա նշեց, որ բրիտանական կառավարությունը հետաքրքրված է իր երկրի գործարարության ընդլայնման եւ տարբեր երկրներում ներդրումների իրականացմամբ, այդ թվում եւ Հայաստանում:

<p>պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>	<p>Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի փոխնախագահի հանդիպումը Լոռու մարզպետի հետ</p>	<p>2012թ</p>	<p>Գերմանիայի Դաշնային Բունդեսթագի փոխնախագահի ղոկտոր Վոլֆգանգ Թիրգեի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 3-ին ճանաչողական այցով ժամանել էր Լոռի, նպատակ ունենալով ծանոթանալու մարզի արտադրական պոտենցիալին, առկա հիմնախնդիրներին և Գերմանական կառավարություն կողմից մարզում իրականացվող ծրագրերի ընթացքին:</p>
	<p>Հայաստանում Նիդերլանդների փոխդեսպան Անջել Սամուրայի այցը Լոռու մարզի Սպիտակ քաղաք</p>	<p>2012թ մարտի 20</p>	<p>Այցի նպատակն էր «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ-ի և Նիդերլանդական ՊԱՄ կազմակերպության միջև համագործակցության համաձայնագրի ստորագրում, որի նպատակն է մարզի Սպիտակի տարածաշրջանում գյուղատնտեսության ու մասնավորապես անասնապահության զարգացումը</p>
	<p>Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Անրի Ռենոյի այցը Լոռու մարզ</p>	<p>2012թ Մարտի 28</p>	<p>Լոռին ընտրվել է պիլոտային մարզ, կամավոր հրշեջների եւ փրկարարների վերապատրաստման ծրագրեր իրականացնելու համար, Ստեփանավան քաղաքում ՊԱԿԱ-ի ֆինանսավորմամբ արդեն բացվել է փրկարարական կենտրոն, որը հազեցած է նոր տեխնիկայով եւ սարքավորումներով: Այցը ճանաչողական նպատակ ուներ: Մարզպետ Ա. Նալբանդյանի մոտ հանդիպման ժամանակ խոսվել է հայ-ֆրանսիական համատեղ իրականացված ծրագրերի եւ հետագա համագործակցության վերաբերյալ: Դեսպանն այցելել է ՎՊՄԻ, հանդիպել ուսանողների հետ, ապա մեկնել է Ստեփանավան՝ փրկարարական կենտրոն:</p>
	<p>ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ստեփան Սուխորենկոյի այց Լոռու մարզ</p>	<p>2012թ փետրվարի 27</p>	<p>Մարզպետ Ա.Նալբանդյանի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել Բելառուսի Վիտեբսկի մարզի հետ նոր համագործակցության սկիզբ դնել: Մարտի 6-ին պաշտոնական հրավերք է ստացվել ս.թ. մայիս ամսին մարզպետի գլխավորությամբ Լոռու մարզի պատվիրակության այց Վիտեբսկի մարզ: Այցը հետաձգվել է մինչեւ հուլիս ամիսը: Իրականացվել են այդ այցի նախապատրաստական աշխատանքները: Այցի ընթացքում նախատեսվում են երկու մարզերի եւ նրանց քաղաքների միջեւ համագործակցության պայմանագրերի կնքում:</p>

		<p>Ֆրանսիայի Պրովանսի համալսարանի, Էքս-Մարսելի Ակադեմիայի մանկավարժական համալսարանական ինստիտուտի եւ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի միջեւ կնքված «Փոխանակումների խթանման եւ զարգացման համար» համաձայնագիր</p>		<p>2008-2012թթ</p>	<p>2012թ մարտ</p>	<p>Մարտի 11-ից 15-ը Վանաձորի Պետական մանկավարժական ինստիտուտի եւ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղի ֆրանսերեն լեզուն տրավպետող մեկական ուսանողներ ու.թ. մարտին այցելել են Ֆրանսիայի Մարսել քաղաք, մասնակցելու «Ջրի համաշխարհային ֆորումին»</p>
			<p>Ռիոն Ալպերի Հայաստան հանձնախմբի ներկայացուցիչների այց Լոռու մարզ</p>		<p>2012թ</p>	<p>Հոկտեմբերի 21-ին Լոռու մարզ էր ժամանել Ֆրանսիայի Հանրապետության Ռիոն Ալպերի Հայաստան հանձնախմբի նախագահ, Ռիոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի ընտրված պաշտոնյա, Բուրժե դյու Լաք քաղաքի քաղաքապետ Էդուարդ Սիմոնյանը, Ռիոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի Եվրոպայի, արտաքին հարաբերությունների և համագործակցության բաժնի պատասխանատու Աննա Ֆիորինի Բերիոտի հետ: Մարզպետարանում կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են Լոռու մարզում իրենց կողմից ֆինանսավորված ծրագրերի կատարման ընթացքը: Դրանք էին՝ Էկոտուրիզմ Ստեփանավանում - երկու ծրագիր կենտրոնի կառուցում Դսեղում կոոպերատիվի հիմնում և չորանոցի կառուցում Օծունում ֆրանսախոսության ծրագրեր Վանաձորում և Ստեփանավանում, քաղաքապետների այց Ռիոն Ալպ Նշվեց, որ ակնկալվում են այդ ծրագրերից որոշ մասի շարունակություն 2013թ-ին:</p>
		<p>Ռուսաստանի Դաշնության Կոստրոմա քաղաքի իշխանությունների առաջարկությունը ՀՀ Վանաձոր քաղաքի իշխանություններին քույր քաղաքներ դառնալու համագործակցության վերաբերյալ</p>			<p>2012թ դեկտեմբեր</p>	<p>ՌԴ Կոստրոմա քաղաքի իշխանությունները ցանկություն են հայտնել համագործակցություն ծավալել ՀՀ Վանաձոր քաղաքի իշխանությունների հետ՝ առաջարկելով հոշակել Կոստրոմա և Վանաձոր քաղաքները քույր քաղաքներ: Մարզպետարանը առաջարկությունը փոխանցել է Վանաձորի քաղաքապետարանին, ուսումնասիրելու եւ հնարավոր համաձայնությունը տալու նպատակով: Քննարկման արդյունքում Վանաձորի քաղաքապետարանը տվել է իր համաձայնությունը, որն ուղարկվել է ՀՀ ԱԳՆ՝ ռուսական կողմին փոխանցելու համար:</p>

		Լիտվայի Հանրապետության Շյաույայսի իշխանությունների առաջարկությունը ՀՀ քաղաքներից որեւէ մեկի հետ համագործակցություն հաստատելու վերաբերյալ		2012թ դեկտեմբեր	Նոյեմբեր ամսին Լիտվայում ՀՀ դեսպանը հանդիպել էր Շյաույայի քաղաքապետի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Շյաույայի և Հայաստանի քաղաքներից մեկի հետ գործնական կապեր հաստատելու հնարավորությունը: Դեսպանությունն առաջարկել էր համագործակցության առաջարկը քննարկել Վանաձորի քաղաքապետարանի հետ: Մարզպետարանն առաջարկությունը փոխանցել է Վանաձորի քաղաքապետարանին, ուսումնասիրելու եւ հնարավոր համաձայնությունը տալու նպատակով: Վանաձորի քաղաքապետարանում քննարկվել եւ ընդունվել է հնարավոր համագործակցության առաջարկությունը, որն ուղարկվել է ՀՀ ՏԿՆ:
4.	Բազմակողմ և այլ միջոցառումներ	Ալավերդի-Քոբուլեթի (քույր քաղաքներ)			Հունիսի 1-ից 2-ը Ալավերդի քաղաքում մեծ շուքով տոնվել է Քոբուլեթի – Ալավերդի համագործակցության 5-ամյակը: Տոնախմբությանը մասնակցել է Քոբուլեթից ժամանած պատվիրակությունը:

Հավելված 1

ՀՀ 2012թվականի պետական բյուջեի նախագծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծախսերի)

Հազ.դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			N Ծրագրի	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	այդ թվում՝			
Բաժին	Խումբ	Դաս				Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	Ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
				ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	675370.5	180600	0	34400	460370.5
				ՀՀ Լոռու մարզ	83,545.50	43,000.00		2.400.0	38,145.50
8	2	5	14	Հայկական տպագրության 500-ամյակի շրջանակներում գրադարանների տեխնիկական վերազինում և արդիականացում	460.370.5	0	0	0	460.370.5
				«Լոռու մարզային գրադարան» ՊՈԱԿ	38,145.50				38,145.50
8	2	7	3	Հուշարձանների վերանորոգում և վերականգնում	215,000.00	180,600.00	0	34,400.00	0
				ՀՀ Լոռու մարզ	45,400.00	43,000.00	0	2.400.0	0
				գ. Քոբեր ե/կայարան Քոբայրավանք	15,000.00	15,000.00			
				գ. Լոռի Բերդ «Լոռի բերդ» ամրոց	10,000.00	10,000.00			
				գ. Սանահին, Սանահինի վանք	18,000.00	18,000.00			
				գ. Աքրի Բգավոր եկեղեցի	2,400.00			2400	
				ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	4,026,400	26400	3,779,000.00	221,000.00	0
4	5	1	2	ՀՀ Լոռու մարզ	1,253,597.00		1,253,597.00		
				1.Ճանապարհների հիմնանորոգում	1,221,986.00		1,221,986.00		

			1.1 Միջպետական նշանակության ա/ճանապարհներ	7,267.00	0	7,267.00	0	0
			Ա/Ճ Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման	7,267.00		7,267.00	0	0
			43-րդ կմ-ում հենապատի փլվածքի վերականգման աշխատանքներ	2,691.00		2,691.00		
			45-րդ կմ-ում հենապատի փլվածքի վերականգման աշխատանքներ	4,576.00		4,576.00		
			1.2 Հանրապետական նշանակության ա/ճանապարհներ	754,719.00	0	754,719.00	0	0
			Հ-24 Գյուլագարակ-Թումանյան կայարան Մ-6 ա/ճանապարհի Կուրթան-Ձորագետ հատվածի 10-րդ և 11-րդ կմ-ում հենապատի կառուցման աշխատանքներ	21,570.00		21,570.00		
			Հ-25, Մ-6-Հաղպատի պատմական հուշարձան-Ծաղկաշատ ավտոճանապարհի շեպերի ուղղման և քարաթափման աշխատանքներ	6,850.00		6,850.00		
			Հ-180 Ալավերդի - Զիլիգա - Վրաստանի սահման ավտոճանապարհի ստորին հենապատի և ջրահեռացման խողովակի վերանորոգման աշխատանքներ	6,299.00		6,299.00		
			Հ-184, Մ-3-Նորաշեն-Սարչապետ հիմնանորոգման աշխատանքներ (Նորաշեն-Սարչապետ հատված)	720,000.00		720,000.00		
			1.3 Մարզային նշանակության ճանապարհներ	460,000.00	0	460,000.00	0	0
			Լոռու մարզի Լոռի բերդ տանող ճանապարհա-հատվածի վերնորոգման աշխատանքներ	70,000.00		70,000.00		
			Լոռու մարզի Հարթագյուղ համայնքը Վանաձոր-Գյումրի մայրուղուն միացնող ճանապարհահատվածի հիմնանորոգում: Հարթագյուղ-Խնկոյան միջհամայնքային ա/ճանապարհի վերնորոգման աշխատանքներ	390,000.00		390,000.00		
4	5	1	2.Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում	31,611.00	0	31,611.00	0	0
			1.Մարզային նշանակության ճանապարհներին, այդ թվում	31,611.00	0	31,611.00	0	0
			Լոռու մարզի Նոր Խաչակապ գյուղի կամրջի վերանորոգման աշխատանքներ	31,611.00		31,611.00		

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			Ծրագրի N	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	այդ թվում՝			
Բաժին	Խումբ	Դաս				Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքներ	Ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
				ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	8434106.7	3908143.8	4525962.9	0	0
9	6	1	2	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	4.172.726.0	0	4.172.726.0	0	0
				ՀՀ Լոռու մարզ	179,000.00	0	179,000.00	0	0
				«ք. Ալավերդու արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ	20,000.00		20,000.00		
				Վանաձորի թիվ 24 դպրոց	153,000.00		153,000.00		
				գ. Լեռնապատի Ե.Դալլաքյանի անվան միջնակարգ դպրոցի միջանցքների սալիկապատում	6,000.00		6,000.00		

Տեղեկանք

ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ

(հազ. դրամ)

Հ/Հ	Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2012 թ. կարիքների գնահատման արժեքը ըստՄՋԾ-ի	2012թ. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերը	ՏԱՊ-ով փաստացի կատարված ծրագրերը		Կատարման տոկոսը %
